Ուսուցչի ձեռնարկ

14

Հոգևոր զորությունը և գերբնականը

Բացահայտել իրական հոգևոր զորությունը և դրա ազդեցությունը

ԽՈՒՆՔՀ
Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար

Հոգևոր զորությունը և գերբնականը

Բացահայտել իրական հոգևոր զորությունը և դրա ազդեցությունը

Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Ուսուցչի ձեռնարկ

5-րդ խմբագրում

ԽՈՒՆՔՀ
Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար

Հոգևոր զորությունը և գերբնականը

Բացահայտել իրական հոգևոր զորությունը և դրա ազդեցությունը

Ուսուցչի ձեռնարկ

5-րդ խմբագրում

Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Եթե այլ կերպ նշված չէ, աստվածաշնչյան բոլոր մեջբերումներն արված են Trinitarian Bible Society (Tyndale House, Dorset Road, London, SW19 3NN, England)-ի կողմից կատարված ժամանակակից թարգմանությունից:

Բոլոր իրավունքները, ներառյալ ներկայացնելու կամ որևէ ձևով՝ ամբողջական կամ մասնակի, վերատպելու, պաշտպանված է Համաշխարհային հեղինակային իրավունքի կոնվենցիայով և մյուս կոնվենցիաներով, պայմանագրերով ու հռչակագրերով:

Այս դասընթացը սկզբում լույս է տեսել անգլերեն, *Spiritual Power and the Supernatural,* 5th edition վերնագրով:

Այս նյութը կարող է վերատպվել և բաժանվել, որպեսզի օգտագործվի Թին Չելենջի, նմանատիպ ծրագրերի, տեղական եկեղեցիների, դպրոցների, այլ կազմակերպությունների և անհատների համար: Այս նյութերը նաև կարող են ներբեռնվել հետևյալ կայքից՝ www.iTeenChallenge.org: Նրանք, ովքեր կցանկանան վաճառել այս նյութերը, պետք է գրավոր թույլտվություն ստանան Գլոբալ Թին Չելենջից:

Այս դասընթացը *Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար* դասընթացի մի մասն է, որը մշակվել է, որպեսզի օգտագործվի եկեղեցիներում, բանտային ծառայություններում, Թին Չելենջում և նմանատիպ ծառայություններում, որտեղ աշխատում են նորադարձ քրիստոնյաների հետ: Դասընթացի մեջ մտնում են՝ Ուսուցչի ձեռնարկը, Ուսանողի ձեռնարկը, Ուսուցման ուղեցույցը, Ստուգարքը և Վկայականը: Դրանց մասին առավել տեղեկություններ ստանալու համար դիմել.

Global Teen Challenge
PO Box 511
Columbus, GA, 31902 USA
Email: gtc@globaltc.org
Web: www.globaltc.org
www.iTeenChallenge.org

ԽՈԼՆՔՀ
Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար

Վերջին անգամ վերանայվել է. 11-2022

Հոգևոր զորությունը և գերբնականը

Հավատի, հոգևոր զորության և գերբնական երևույթների մեջ հավատացյալների ներգրավվածության թեմաները վերջին շրջանում շատ եկեղեցիներում դարձել են բավականին հակասական: Մենք չենք փորձի լուծել այդ թեմաների հետ կապված աստվածաբանական վեճերն ու հարանվանական տարբերությունները: Մենք կդիտարկենք, թե ինչ է իրականում հոգևոր զորությունը, և թե ինչպես կարող է այն գործնական ազդեցություն ունենալ նորադարձ հավատացյալների կյանքի վրա:

1 **Գլուխ 1. Աստծո դերը մեր աշխարհում:**

Մենք կքննարկենք Աստծո դերը մեր աշխարհում. թե՛ անցյալում, թե՛ ներկայում: Մենք կնայենք, թե ինչպես և ինչու է Աստված այսօր աշխարհին միջամտում գերբնական դեպքերով:

2 **Գլուխ 2. Ի՞նչ է հոգևոր զորությունը:**

Ի՞նչ է նշանակում լինել հոգևորապես ուժեղ: Մենք կուսումնասիրենք ճշմարիտ հոգևոր զորության, հավատի, հավատալիքի, վստահության և հույսի հատկությունները: Մենք աստվածաշնչյան սահմանում կտանք դրանցից յուրաքանչյուրին:

3 **Գլուխ 3. Ինչպե՞ս ունենալ հոգևոր զորություն:**

Դասընթացի այս գլխում մենք հետազոտում ենք այն հատուկ գործողությունները, որոնք մարդը պետք է անի հոգևոր զորություն ունենալու համար:

4 **Գլուխ 4. Ճշմարիտ հոգևոր զորությունը և արհեստածինները:**

Մենք ուսումնասիրում ենք Աստծո ուժի, սատանայի ուժի և մարդու ուժի տարբերությունները: Ի՞նչ տարբերություն կա հավատի և ենթադրության միջև: Մենք նաև կքննենք այսօրվա հավատի ուսուցումների մի քանի սխալներ:

Ինչ է ներառված Ուսուցչի ձեռնարկում

Ուսուցչի ձեռնարկն ունի չորս բաժին: Յուրաքանչյուր բաժին առանձնացված է հիմնական վերնագրով:

1. Դասի ծրագրեր ուսուցչի համար,
2. Ուսանողի ձեռնարկ,
3. Ուսուցման ուղեցույց,
4. Ուսանողի ստուգարք, պատասխաններ և դասընթացի վկայական:

Բացատրությունը, թե ինչպես օգտագործել յուրաքանչյուր բաժինը, տրվում է անմիջապես տվյալ էջը ներկայացնելուց հետո:

Նախաբան

Այս դասընթացը մեկն է այն դասընթացներից, որոնք նախատեսված են նորադարձ քրիստոնյաների համար: Մենք հավատում ենք, որ այսօր մեծ կարիք կա օգնելու նորադարձ քրիստոնյաներին Քրիստոսի ուսմունքը գործնականորեն կիրառելու իրենց կյանքում: Դասընթացները կարող են օգտակար լինել նաև եկեղեցու երիտասարդների և մեծահասակների ծառայության մեջ, ովքեր ուզում են քրիստոնեությունն իրենց ամենօրյա կյանքի առավել գործնական մասը դարձնել:

Այս դասընթացի և ամբողջ՝ *Խմբային ուսուցումներ նոր քրիստոնյաների համար*-ի հիմնական նպատակն է՝ նորադարձ քրիստոնյաներին ներկայացնել նշանակալի, կյանքին վերաբերող հարցեր: Մենք չենք փորձում ներկայացնել այդ թեմաների սպառիչ ուսումնասիրությունները:

Թին Չելենջի՝ ԱՄՆ-ի ուսումնական ծրագրի կոմիտեն ծրագրավորում է շարունակել վերանայել այս դասերը: Մենք պատրաստ ենք ընդունել այս նյութերի զարգացման վերաբերյալ ձեր ունեցած ցանկացած քննադատություն կամ միտք:

Ինչպես օգտագործել Ուսուցչի ձեռնարկը

1. Դասերի ծրագրեր ուսուցչի համար

Այս բաժնի առաջին էջն ընդհանուր պատկերացում է տալիս ողջ դասընթացի վերաբերյալ:

Հաջորդ էջը *Դասարանական Հանձնարարության Ցուցակ -ի* մի օրինակ է: Այն ցույց է տալիս, թե երբ պետք է Ուսուցման ուղեցույցի յուրաքանչյուր նախագիծ լրացվի և երբ յուրաքանչյուր հարցաշար և ստուգարք տրվի: Ուսուցման ուղեցույցներն արդեն ունեն այս ձևի չլրացված բլանկները հետևի կազմի ներսի կողմում:

Հաջորդը կլինի դասերի ծրագրերը յուրաքանչյուր դասի համար: Այս բոլոր դասերի ծրագրերն ունեն Աստվածաշնչյան Բանալի ճշմարտություն և Բանալի համար: Դրանք կարող են տրվել դասի սկզբում: Դրանք նաև օգնում են քննարկումը պահել հիմնական թեմայի վրա ողջ դասի ընթացքում:

Ներքևում կան Աստվածաշնչյան Բանալի ճշմարտության և Բանալի համարի մի քանի մեկնաբանություններ՝ թե ինչպես սովորեցնել դասը: Շատ դեպքերում հղումներ են արվում Ուսանողի ձեռնարկին կամ Ուսուցման ուղեցույցի նախագծերին:

Յուրաքանչյուր դաս ամփոփվում է «անձնական կիրառություն» քայլով: Սրա կարևորությունը չի կարող գերագնահատվել: Նորադարձ քրիստոնյաները կարիք ունեն հստակ առաջնորդություն ստանալու, թե ինչպես այս աստվածաշնչյան ուսուցումները կիրառեն իրենց ամենօրյա կյանքում: Համոզվա՛ծ եղեք, որ բավականաչափ ժամանակ եք տալիս ձեր ուսանողներին, որպեսզի սկսեն այս անձնական կիրառման ընթացքը:

Յուրաքանչյուր դասի ծրագրի վերջում ուսանողի համար կա հանձնարարությունների ցուցակ:

Այս դասընթացներից շատերը նախատեսված են հինգ դասերի համար՝ յուրաքանչյուրը մեկ ժամ տևողությամբ: Այս բոլոր 14 դասընթացները կարելի է ավարտել 3-4 ամիսների ընթացքում, եթե դուք շաբաթական հինգ օր դասեր ունենաք: Եթե դուք ունենաք շաբաթական մեկ ժամ, ապա մեկ դասընթացը կարող եք ավարտել մեկ ամսում, իսկ ամբողջ շարքը՝ մոտ մեկ տարում: Այս դասերից շատերը հեշտությամբ կարելի է անցկացնել ավելի երկար ժամանակահատվածում կամ վերածել ավելի շատ դասերի:

2. Ուսանողի ձեռնարկ

Ուսանողի ձեռնարկը կարող է ծառայել երկու նպատակների: Դուք կարող եք հանձնարարել ուսանողներին՝ կարդալ համապատասխան էջերը՝ տրված դասին նախապատրաստվելու համար: Կամ էլ կարող եք հանձնարարել նրանց՝ այն կարդալ դասը անցկացնելուց հետո՝ վերանայելու և ամրացնելու այն, ինչ ուսուցանվեց դասարանում:

Մենք քաջալերում ենք, որ դուք ուսանողներին հանձնարարեք նշումներ անել դասարանում, չնայած այն բանին, որ նրանց տալիս եք Ուսանողի ձեռնարկը: Նրանց անձնական նշումները և դասարանական քննարկումները կօգնեն պարզաբանել Ուսանողի ձեռնարկի որոշ թեմաներ:

3. Ուսուցման ուղեցույց

Ուսուցման ուղեցույցի նախագծերը նախատեսված են ուսանողներին դասասենյակից դուրս աշխատանքով ապահովելու համար: Որոշ նախագծեր կօգնեն ուսանողներին նախապատրաստվել հաջորդ քննարկմանը:

Նախագծերից շատերը նախատեսված են օգնելու ուսանողներին՝ ավելի խորը նայել դասարանում քննարկված որոշ թեմաներ: Այս հանձնարարությունների հիմնական նպատակն է՝ օգնել ուսանողներին բացահայտել, թե ինչպես աստվածաշնչյան ճշմարտությունները կիրառեն իրենց ամենօրյա կյանքում:

4. Ուսանողի ստուգարք և Ստուգարքի պատասխաններ

Ստուգարքները նախատեսված են պարզ կերպով գնահատելու յուրաքանչյուր ուսանողի առաջընթացը՝ դասընթացի ընթացքում անցած աստվածաշնչյան ճշմարտությունները հասկանալու հարցում: Ստուգարքի պատասխանները գտնվում են այս Ուսուցման ձեռնարկի՝ ուսանողի ստուգարքի նմուշի վերջին էջից անմիջապես հետո:

5. Դասընթացի վկայական

Դասընթացի վկայականը որպես գնահատանք պետք է տրվի նրանց, ովքեր կավարտեն դասընթացի համար պահանջվելիք ամբողջ աշխատանքը և բարեհաջող կհանձնեն ստուգարքը: Դասընթացի վկայականը գտնվում է Ուսուցչի ձեռնարկի վերջին էջում: Ավարտական վկայական կարող է տրվել նաև այն ուսանողներին, ովքեր կավարտեն *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար*-ի բոլոր 14 դասընթացների շարքը: Նմուշը ներառված է «Ուսուցիչներին ներկայացնել խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար» գրքում:

Դասընթացների ակունքները

Սողոմոնն ասաց, որ արևի տակ նոր բան չկա: Նույնը կարելի է ասել նաև այս դասերի մասին: Այս մտքերից շատերը նոր չեն: Մենք ուզում ենք արտահայտել մեր հատուկ գնահատականը *Կյանքի հիմքային սկզբունքների ինստիտուտին* այն ազդեցության համար, որ նրանք ունեցել են այս նյութերը մշակող մարդկանց վրա: Այս դասերից շատերը կրում են *Կյանքի հիմքային սկզբունքների ինստիտուտի* հետքերը:

Ես նաև ուզում եմ արտահայտել իմ խորին երախտագիտությունն այն բազմաթիվ ուսուցիչներին ու հազարավոր նորադարձ քրիստոնյաներին, ովքեր օգտագործել են այս նյութերը վերջին մի քանի տարիների ընթացքում: Նրանց տված գաղափարները մեծ դեր են խաղացել այս դասընթացների մշակման մեջ: Ես նաև շատ երախտապարտ եմ Դոն Վիլկերսոնին, որն ինձ հնարավորություն տվեց աշխատել Բրուկլինում (Նյու Յորք) 1971-1975թթ.-ին: Այդ տարիներին էր, որ *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար*-ի մշակումն առաջին անգամ սկսվեց:

Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար դասընթացների հինգերորդ խմբագրումը մշակվել է Թին Չելենջի՝ ԱՄՆ-ի Ուսումնական ծրագրի կոմիտեի օգնությամբ: Հատուկ շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր աջակցել են այդ վերանայման գործընթացին:

Այս նյութերը վերատպելու վերաբերյալ մոտեցումը

Ուսուցչի ձեռնարկը, ինչպես նաև ուսանողական մյուս բոլոր նյութերը, որոնք վերաբերում են *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* դասընթացներին, պաշտպանված են հեղինակային իրավունքով: Այս նյութերը կարող են վերատպվել և բաժանվել օգտագործելու նպատակով Թին Չելենջում, նմանատիպ ծրագրերում, տեղական եկեղեցիներում, դպրոցներում և այլ կազմակերպություններում, ինչպես նաև անհատների համար: Այս նյութերը նաև կարող են ներբեռնվել համացանցում հետևյալ կայքից՝ www.iTeenChallenge.org: Սակայն այս նյութերը չեն կարող վաճառվել, այլ միայն՝ անվճար բաժանվել: Նրանք, ովքեր ուզում են տպագրել և վաճառել դրանք, պետք է գրավոր թույլտվություն ձեռք բերեն Գլոբալ Թին Չելենջից:

Խորհուրդ է տրվում ուսուցման հետևյալ հերթականությունը

Այս դասընթացը *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* շարքի 14 ուսուցումներից մեկն է: Բոլոր 14 դասընթացները այստեղ ներկայացված են ուսուցման՝ խորհուրդ տրված հերթականությամբ: Հերթականության ցանկը մշակվել է դասընթացների շարունակական ուսուցման համար: Ավելի լավ կլինի այն ձևել 14 ճաղեր ունեցող անիվի նման: Այս դասընթացները կառուցված չեն մեկը մյուսի վրա: Ամեն մեկն առանձին է: Այնպես որ, ուսանողները կարող են միանալ դասերին ցանկացած կետում և շատ հեշտությամբ հարմարվել:

1. Ինչպե՞ս կարող եմ վստահ լինել, որ ես ճշմարիտ քրիստոնյա եմ
2. Թռուցիկ հայացք Աստվածաշնչին
3. Վերաբերմունքներ
4. Փորձություններ
5. Հաջողակ քրիստոնեական կենսակերպ (ներառում է դասեր Սուրբ Հոգու ծառայության վերաբերյալ)
6. Աճել ձախողումների միջոցով
7. Քրիստոնեական պրակտիկա (շփում Տեղական եկեղեցու հետ)
8. Հնազանդություն Աստծուն
9. Հնազանդություն մարդուն
10. Բարկություն և անձնական իրավունքներ
11. Ինչպես ուսումնասիրել Աստվածաշունչը
12. Սեր և ինքնաընդունելություն
13. Անձնական փոխհարաբերություններ մարդկանց հետ
14. Հոգևոր զորություն և գերբնականը

Այս դասընթացների ուսուցման նպատակով լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «*Ուսուցիչներին ներկայացնել խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար*» գիրքը:

Դասի ծրագրեր
ուսուցիչների համար

Տե՛ս սույն Ուսուցչի ձեռնարկի 4-րդ էջը՝ այս դասերի ծրագրերի օգտագործման վերաբերյալ ավելի շատ տեղեկություններ ստանալու համար:

Դասընթացի ամփոփ նկարագրություն:

1. Այս դասընթացի նպատակը.

   ա. Հասկանալ Աստծո դերն աշխարհում:

   բ. Իմանալ ճշմարիտ հոգևոր զորության հատկանիշները:

   գ. Սովորել օգտագործել Աստծո զորությունը մեր հոգևոր կյանքում:

   դ. Իմանալ Աստծո ուժի, սատանայի ուժի և մարդու ուժի միջև եղած տարբերությունը:

2. Այս դասընթացը շատ ճկուն է: Դու չես կարող անցնել ամբողջ նյութն այն կարճ ժամանակում, որի ընթացքում պետք է դասավանդես այն: Ահա մի քանի խորհուրդներ, որոնք քեզ կօգնեն այս դասընթացն անցկացնելու ընթացքում հիասթափություններ թույլ չտալու հարցում:

3. Մի՛ փորձիր ամեն բան ուսուցանել ամենայն մանրամասնություններով՝ ինչպես գրված է ուսանողի ձեռնարկում և ուսուցչի դասի ծրագրերում: Դու պետք է վերցնես այն կետերը, որոնք զգում ես, որ ամենակարևորն են, և վատ մի՛ զգա մյուս կետերի վրայով արագ անցնելու համար:

4. Մտքիդ մեջ ունեցի՛ր, թե որն է լինելու *Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար* դասընթացի հաջորդ բաժինը, որն ուսուցանելու ես: Եթե դու հետևում ես այս Ուսուցչի ձեռնարկի 4-րդ էջում նշված՝ մեր առաջարկած հերթականությանը, ապա հաջորդ դասընթացը կլինի՝ *Ինչպե՞ս կարող եմ վստահ լինել, որ ես ճշմարիտ քրիստոնյա եմ:* Հիմա ժամանակն է որոշելու, թե որ թեմաներն ես ընդգծելու այս դասընթացին, իսկ ինչն ես թողնելու հաջորդին՝ *Ինչպե՞ս կարող եմ վստահ լինել, որ ես ճշմարիտ քրիստոնյա եմ:* Հիշի՛ր, որ դու ԽՈՒՆՔՀ-ում ունես ևս 13 դասընթացների շարք, որտեղ կարող ես անցկացնել այս դասընթացում առաջացած հարցերը:

5. Ուշադրությո՛ւն դարձրու քո ուսանողների հասունությանը: Գուցե ոմանք դեռ հավատացյալներ չեն: Իսկ եթե հավատացյալ են, ապա՝ որքա՛ն ժամանակ: Քրիստոնեական ի՞նչ անցյալ են նրանք ունեցել:

6. Հոգևոր զորությունն ու գերբնական դեպքերը պատկանում են մեկ այլ դասակարգման՝ ի տարբերություն հետևյալի. բարկություն, սեր, վերաբերմունքներ և ձախողում: Մի՛ զարմացիր, եթե քո ուսանողները վերջում ավելի շատ ունենան առանց պատասխանի հարցեր, քան ունեին դասընթացի սկզբում:

7. Մի՛ դասավանդիր այն, ինչը օգտակար է քեզ համար, այլ քեզ դի՛ր նրանց տեղում և փորձի՛ր հասկանալ, թե ինչը կլիներ ամենաօգտակարը նրանց համար: Ավելի շատ տեղեկանալով նրանց կարիքներին՝ դու կարիք կունենաս որոշ կարգավորումներ անել այս դասընթացի ուսուցման մեջ:

8. Ինչ էլ որ ընտրես որպես հիմնական թեմա յուրաքանչյուր դասի համար, անպայման ուշադրությո՛ւն դարձրու ամեն մի դասի անձնական կիրառմանը: Յուրաքանչյուր դասի վերջում մենք ներառել ենք մեկ կամ ավելի անձնական կիրառման առաջարկվող գործունեություն:

9. Հաջորդ դասին դու կգտնես *Դասարանական Հանձնարարության Ցուցակ*, որում ասվում է, թե երբ պետք է յուրաքանչյուր հանձնարարություն կատարվի: Թող քո ուսանողները լրացնեն համապատասխան ամսաթվերը՝ օգտագործելով Ուսուցման ուղեցույցի վերջում գտնվող՝ *Դասարանական Հանձնարարության Ցուցակ* դատարկ օրինակը:

Դասարանական հանձնարարության ցուցակ

Դասընթացի անվանումը. Հոգևոր զորությունը և գերբնականը

Հարցաշարեր	**Անգիր համարներ**	**Ամսաթիվ**
1.	Բ Պետրոս 1.3	օր 2.
2.	Հակոբոս 1.2-4	օր 3.

Նախագծեր

Ամսաթիվ

1. օր 1.
2. օր 2.
3. օր 3. կամ այլընտրանքային
4. օր 2.
5. օր 3.
6. օր 4.

Ստուգարք օր 5.

Դաս 1.
Աստծո դերը մեր աշխարհում:

1

1. **Աստվածաշնչյան բանալի համար:**

Աստված ամենակարող է: Նա շատ է հետաքրքրված աշխարհով: Անցյալում և ներկայում Նա տարբեր ձևերով ցույց է տալիս Իր սերն ու անհանգստությունը մեր հանդեպ:

2. **Բանալի համար:**

Ղուկաս 1.37.

«Աստծո համար անկարելի բան չկա»:

3. **Հղում ուսանողական նյութերին:**

Ուսանողի ձեռնարկի 1-ին գլուխը համընթաց է այս դասի հետ: Ուսանողի ձեռնարկի Նախագիծ 1-ինը՝ **«Աստծո գերբնական ուժը»,** նույնպես կարող է օգտագործվել այս դասին:

4. **Դասի ջերմացման գործողություն. դերակատարում. «Ո՞վ է իրական Աստվածը», հեղինակ՝ John Koehler (5 րոպե):**

Դու կամավորների հետ նախապես պայմանավորվելու կարիք կունենաս, որպեսզի նրանք մասնակցեն այս դերակատարման մեջ: Նախապես բաժանի՛ր նրանց դերերը՝ ներկայացմանը պատրաստվելու համար:

<u>ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ.</u>	Դերակատարման համար ընտրի՛ր չորս մասնակից և ցուցումնե՛ր տուր նրանց իրենց դերերի վերաբերյալ: Եթե դու չես ուզում կատարել վարողի դերը, ուրեմն մեկ ուրիշի՛ն ընտրիր այդ դերի համար:
<u>ԻՐԱՎԻՃԱԿԸ</u>.	Երեք անձնավորություններ, որոնք ներկայացնում են Աստծո երեք տեսակետները, նստած են դասարանի դիմաց: Պատմողը պետք է կանգնի մի կողմում՝ մի փոքր հեռու: Չորրորդ անձնավորությունը, որը ներկայացնում է իրական Աստծուն, պետք է լինի ունկնդիրների մեջ՝ նախքան պատրաստ կլինի խոսելու:

1

ՎԱՐՈՂ. Մենք այստեղ ենք՝ բացահայտելու համար, թե ով է իրական Աստվածը: Ես կհրավիրեմ այս երեք անձնավորություններից յուրաքանչյուրին, որպեսզի խոսեն: Նրանց հետ վերջացնելուց հետո ես կխնդրեմ ձեզ՝ ունկնդիրներիդ, քվեարկելու, թե ձեր կարծիքով որն է իրական Աստվածը:

ՎԱՐՈՂ. Թեկնածու համար 1-ին, կներկայացնե՞ք Ձեզ:

ԱՌԱՋԻՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ. «Ես Աստվածաշնչի Աստվածն եմ և պատժում եմ մեղքը: Ամեն անգամ, երբ ինչ-որ մեկը սահմանն անցնում է, Ես հարվածում եմ նրա գլխին: Ես չեմ կարող համբերել այդ մեղավորներին»:

ՎԱՐՈՂ. Թեկնածու համար 2-րդ, կներկայացնե՞ք Ձեզ:

ԵՐԿՐՈՐԴ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ. «Ամեն բան Իմ վերահսկողության տակ է»: Սա ասելով՝ 2-րդ թեկնածուն մի խամաճիկ է ցույց տալիս և շոյում այն: «Ես ոմանց դժոխք եմ ուղարկում, իսկ մյուսներին՝ երկինք: Նրանք ոչ մի ընտրություն չունեն»:

ՎԱՐՈՂ. Թեկնածու համար 3-րդ, կներկայացնե՞ք Ձեզ:

(Երրորդ թեկնածուն նստած է՝ ականջակալներն ականջներին):

ՎԱՐՈՂ (ձայնը բարձրացնելով). Համար երե՛ք:

ՎԱՐՈՂ (ավելի բարձր ձայնով). Համար երե՛ք:

ԵՐՐՈՐԴ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (Ոտքի է կանգնում մի տեսակ հիասթափված հայացքով): «Օ՛հ, այս մարդի՛կ: Նրանք իրենց ձեռքով փակեցին Եդեմի պարտեզ վերադառնալու ճանապարհը: Իրենք ճաշը եփեցին, իրենք էլ թող ուտեն: Ես ընդհանրապես չեմ ուզում նրանց հետ որևէ գործ ունենալ»:

ՎԱՐՈՂ. Ունկնդիրնե՛ր, դուք լսեցի՞ք այս երեք մարդկանց խոսքը: Հիմա արե՛ք ձեր ընտրությունը: Նրանցից ո՞րն է ձեր կարծիքով Աստվածաշնչի իրական Աստվածը:

(Դասարանին ժամանա՛կ տուր ընտրություն կատարելու, բայց ոչ մի քննարկման մեջ մի՛ մտիր այս պահին):

ՎԱՐՈՂ. Այժմ խնդրում ենք, որ իրական Աստվածը ոտքի կանգնի:

ԵՐԵՔ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ. (Նրանք նայում են միմյանց՝ մի պահ վարանելով, բայց իրենց այնպես դրսևորելով, որ կարծես ուզում են ոտքի կանգնել):

ՉՈՐՐՈՐԴ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ. (Սա հանկարծ ոտքի է կանգնում և առաջ գալիս): «Ես եմ Աստվածաշնչի իրական Աստվածը: Ես Նա եմ, ով ստեղծեց աշխարհն ու ողջ տիեզերքը: Ես Նա եմ, ով 2000 տարի առաջ խաչը բարձրացավ: Ես շարունակում եմ գործել աշխարհում Սուրբ Հոգու գործի միջոցով: Ես չեմ սիրում մեղքը, բայց ուզում եմ օգնել մեղավորին»:

ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐՋԸ:

Հետագա քննարկում:

1. Հարցրո՛ւ նրանց, թե ինչու էին ընտրել համար 1-ինը, 2-րդը, կամ 3-րդը:
2. Ի՞նչ պատկերացումներ դուք ունեիք Աստծո մասին փոքր տարիքում: Ինչպե՞ս են այդ պատկերացումները փոխվել ժամանակի ընթացքում և հիմա:
3. Ձեր ընտանիքի անդամներն Աստծո վերաբերյալ ունեն նո՞ւյն տեսակետը, ինչ՝ դուք: Եթե ոչ, որքանո՞վ են նրանց տեսակետները տարբերվում ձերից:
4. Ի՞նչ հարցեր ունեք Աստծո և Նրա գերբնական ուժի վերաբերյալ:

1

5. **Անցկացրո՛ւ Ա. կետը. «Ի՞նչ են մարդիկ այսօր մտածում Աստծո մասին» (3-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 6-7-րդ:**

Համառոտ քննարկի՛ր մի քանի տեսակետներ, որոնք մարդիկ ունեն Աստծո վերաբերյալ: Խնդրի՛ր նրանց՝ նկարագրել, թե ի՛նչ ձևով կամ ի՛նչ հանգամանքներում են նրանք առաջին անգամ լսել Աստծո մասին, և ինչպիսի՛ն են եղել Աստծո վերաբերյալ նրանց մանկական ընկալումները:

6. **Ամփոփիչ կերպով ներկայացրո՛ւ ողջ դասընթացը (2-3 րոպե):**

Այս դասընթացին համառոտ ներկայացրո՛ւ Աստծո գերբնական ուժը, և թե ինչպես է այն ազդում մեր կյանքի վրա: Շատ դեպքերում Աստված Իր գերբնական ուժն օգտագործում է հրաշքներ անելու համար: Ահա մի հարց, որին մենք կփորձենք պատասխանել. «Իմ կյանքում ի՞նչ գերբնական գործեր կարող եմ ես ակնկալել Աստծուց»:

Մենք նաև կդիտարկենք, թե ինչ է գերբնական ուժը: Ինչ կապ ունեն հավատը, հավատալիքը, հույսն ու վստահությունը ճշմարիտ հոգևոր զորություն ունեցող հավատացյալի կյանքի հետ: Ինչպե՞ս ենք մենք հոգևոր զորություն ունենում:

Այսօր աշխարհում տարբեր տեսակի ուժեր են գործում: Ինչպե՞ս տարբերել Աստծո ուժը և սատանայի ուժը: Ինչպե՞ս կարող է հավատացյալն արդյունավետ կերպով օգտագործել Աստծո ուժը՝ միևնույն ժամանակ չխաբվելով սատանայի ուժից:

7. **Քննարկի՛ր Բ. կետը. «Արարչագործության Աստվածը» (2-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 7-8-րդ էջ:**

Քո ուսանողներից ոմանք, հնարավոր է, մեծացել են այնպիսի միջավայրում, որտեղ օկուլտիզմով են զբաղվել և անձամբ տեսել են սատանայի ուժը: Շատ կարևոր է նրանց հստակ գիտակցություն տալ, թե որքան մեծ է Աստծո ուժը, և այդ անել առանց մանրամասն քննարկումների մեջ մտնելու՝ սատանայի ուժի վերաբերյալ: Այս թեման ավելի հանգամանորեն կքննարկվի սույն դասընթացի 4-րդ դասին:

Բ. Արարչագործության Աստվածը կետը քննարկելիս ցո՛ւյց տուր, որ արարչագործությունը, որ նկարագրվում է Ծննդոցի սկզբում, իրոք գերբնական գործ էր: Աստված ասաց, և տիեզերքի բոլոր մասնիկները ստեղծվեցին: Արարչագործության վերջին օրն Աստված կյանք տվեց Ադամին և Եվային՝ նրանց մարմինները ստեղծելուց հետո: Տե՛ս Ծննդոց 1-ին և 2-րդ գլուխները:

Ոչ ոք չի տեսել, թե ինչպես է Աստված կատարել այդ գերբնական գործերն արարչագործության ընթացքում: Ուրեմն ինչպե՞ս կարող ենք իմանալ, որ Աստվածաշնչի այս հատվածը ճիշտ է: Մենք չենք կարող դա ապացուցել: Մենք ուղղակի պետք է Աստվածաշնչին վստահելու և նրանում ամենայն ասվածին հավատալու որոշում կայացնենք: Աստվածաշնչի հավաստիության հարցն այս պահին լայն քննարկման առարկա մի՛ դարձրու: Սրա մասին մանրամասնորեն քննարկվում է ***Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար*** շարքի՝ ***Թռուցիկ հայացք Աստվածաշնչին*** դասընթացում:

8. Մարդը ստեղծվեց ազատ կամքով (3-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 7-րդ:

Մատնանշի՛ր, որ մարդը ստեղծվեց հատուկ ընդունակությամբ՝ ազատ կամքով ընտրելու և անձնական որոշումներ կայացնելու կարողությամբ: Մենք կարող ենք ապրել Աստծո համար, կամ՝ որոշել ապրել մեր ձևով: Մենք ենք ընտրողը: Ընտրելու ունակությունը շատ կարևոր է՝ հասկանալու համար, թե ինչ տեղ ունի մեղքը աշխարհում և յուրաքանչյուր անձնավորության մեջ:

Դու պետք է գնահատես քո ուսանողների հոգևոր գիտակցությունը, որպեսզի կողմնորոշվես, թե որքան ժամանակ պետք է հատկացնես այս թեմային: Ընդգծի՛ր նրանց անձնական պատասխանատվությունը թե՛ ներկա, թե՛ անցյալ գործողությունների համար:

9. Անցկացրո՛ւ «Բնության օրենքները» կետը (3-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 7-8-րդ:

Տիեզերքի արարման Աստծո գործը քննարկելիս բացատրի՛ր, որ Նա է գործարկել բնության ուժերը, որոնք ամեն օր ազդում են մեր կյանքի վրա: Որպես օրինակ՝ բե՛ր այս օրենքներից մի քանիսը: Քաջալերի՛ր ուսանողներին, որ բնության օրենքներն օգտագործեն որպես հիշեցում, որպեսզի շնորհակալություն հայտնեն Աստծուն Նրա արարչագործության գեղեցկության և կարգ ու կանոնի համար:

Հղո՛ւմ արա «գերբնական» բառի սահմանումին, որը գտնվում է Ուսանողի ձեռնարկի 6-րդ էջում զետեղված շրջանակում: Օգտագործի՛ր մեր ամենօրյա կյանքը կառավարող՝ Աստծո բնության օրենքների և հազվադեպ տեղի ունեցող «գերբնական» դեպքերի միջև եղած հակասությունը:

1

Ի՞նչն է որևէ բան գերբնական դարձնում

Աստված սովորաբար գործում է բնության օրենքների միջակայքում: Երբեմն Աստված որոշում է մի կողմ դնել այդ օրենքները և ինչ-որ գերբնական՝ բնականից այն կողմ, կամ վեր, բան անել: Մենք սրանք կոչում ենք հրաշքներ: Դրանք կատարվում են Աստծո զորությամբ, ոչ թե մարդկային: Երբ դու նայես Աստվածաշնչի հրաշքներին, կամ ներկայումս տեղի ունեցողներին, կարող ես համոզվել, որ Աստծո զորությունն է կատարել, հնարավոր դարձրել այդ հրաշքները՝ գերբնական գործերը:

Հոգևոր զորությունը և գերբնականը, Ուսանողի ձեռնարկ, էջ 8-րդ:

10. Անցկացրո՛ւ Գ. կետը՝ «Ինչպե՞ս էր Աստված շփվում մարդկանց հետ աստվածաշնչյան ժամանակներում», և Դ. կետը՝ «Ինչպե՞ս է Աստված օգտագործում Իր գերբնական ուժը» (3-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 8-9-րդ:

Քո ուսանողներին բացատրի՛ր, որ Աստվածաշունչը լի է օրինակներով, որոնցում Աստված անձնապես հետաքրքրված է մարդկանց կյանքով՝ սկսած ամենաառաջին ընտանիքից՝ Ադամից ու Եվայից: Երբ Հիսուսը եկավ ու ապրեց երկրի վրա, դա հենց Աստծո անձնական հետաքրքրության արտահայտությունն էր մեր բոլորի համար:

Դ. կետը. **« Ինչպե՞ս է Աստված օգտագործում Իր գերբնական ուժը»** անցկացնելիս բացատրի՛ր, որ բոլոր ժամանակների մեծագույն գերբնական դեպքը Հիսուսի մահվան ու հարության միջոցով ողջ մարդկության համար փրկության ապահովումն էր: Գերբնական ամենամեծ քայլը սիրո քայլն էր, ոչ թե վրեժխնդրության կամ կործանելու:

11. Աստծո գերբնական գործերը Հին և Նոր Կտակարաններում (5-20 րոպե), Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1-ինը:

Որքան ժամանակը թույլ կտա՝ քննարկի՛ր Աստծո գերբնական զորության դրսևորումն աշխարհում: Այս պահին ուսումնասիրե՛ք Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1-ինը: Քննարկե՛ք յուրաքանչյուր հրաշքի նպատակը: Մատնանշի՛ր՝ ինչպես են այս հրաշքները ցույց տալիս, թե ինչն է Աստծո համար կարևոր: Աստված հենց այնպես չի օգտագործում Իր զորությունը: Մարդը չի կարող պահանջել, որ Աստված օգտագործի Իր գերբնական ուժը:

12. Անցկացրո՛ւ Դ-2. կետը. «Մենք հոգևոր ուժի կարիք ունենք, որպեսզի շարունակենք հավատացյալ լինել» (5 բոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 10-րդ:

Այս թեման քննարկելիս նշի՛ր, որ մենք Աստծո օգնության կարիքն ունենք՝ մնայուն քրիստոնեական կյանք ապրելու համար: Փրկությունը հրաշք է, սակայն նոր կյանքի սկիզբն է միայն:

Մի՛ ակնկալիր, որ ամեն անգամ, երբ խնդիր ունենաս, Աստված քո կյանքում հրաշք կգործի: Յուրաքանչյուր խնդիր և դժվարություն մեզ համար հնարավորություն է ստեղծում՝ բնավորություն և ներքին ուժ զարգացնելու համար:

Քո ուսանողները պետք է հասկանան, որ Աստված կարող է հրաշք գործել, եթե կամենա, սակայն դա միշտ չէ, որ տեղի է ունենում: Կարևորն Աստծուն ամեն օր ավելի լավ ճանաչելն է, Նրա հետ մտերիմ անձնական փոխհարաբերություն զարգացնելը: Այս թեման ավելի մանրամասն քննարկված է՝ **«Ինչպե՞ս կարող եմ վստահ լինել, որ ես ճշմարիտ քրիստոնյա եմ»** դասընթացում:

Մենք պետք է Աստծուց հրաշքներ խնդրենք: Սակայն ավելի կարևոր է Նրա հետ մտերիմ փոխհարաբերություն զարգացնելը: Քո ուսանողները պետք է սովորեն վստահել Աստծուն, որ Նա կօգնի նրանց հանդիպած ցանկացած խնդրում: Տե՛ս Փիլիպպեցիներին 1.6-ը և 4.13-ը:

13. Ենթարկվել Աստծուն:

Այս դասընթացի համար հիմք դնելով՝ նշի՛ր, որ մենք չենք կարող Աստծուց պահանջել, որ Նա ամեն բան անի մեր ուզած ձևով: Եսայի 55.8-9-ը նշում է մի կարևոր ճշմարտություն:

Եսայի 55.8-9.

«8. Որովհետև Իմ խորհուրդները ձեր խորհուրդները չեն. և ձեր ճանապարհներն Իմ ճանապարհները չեն,- ասում է Տերը»:

«9. Այլ ինչպես երկինքը բարձր է երկրից, այդպես էլ բարձր են Իմ ճանապարհները ձեր ճանապարհներից և Իմ խորհուրդները՝ ձեր խորհուրդներից»:

Նոր Կտակարանի ժամանակներում Հիսուսն անձնապես երկրի վրա էր: Նա շատ հրաշքներ կատարեց: Սակայն Նա անում էր միայն այն, ինչ Հայրն էր Նրան ասում, որ անի: Նախքան երկրից հեռանալը, Նա խոստացավ, որ Սուրբ Հոգի Աստվածը կգա և կապրի Իր հետևորդների մեջ: Այսօր Սուրբ Հոգին բազմաթիվ ձևերով դրսևորում է Աստծո ուժը՝ ներառյալ Սուրբ Հոգու պարգևները:

1

14. Անցկացրո՛ւ Ե. կետը. «Աստված ի՞նչ ծրագրեր ունի ապագայի վերաբերյալ» (5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 12-րդ:

Մի քանի րոպե հատկացրո՛ւ, որ համառոտ նկարագրես Աստծո ծրագիրն աշխարհի ապագայի համար: Ժամանակին կանգնեցրո՛ւ այս թեմայի վերաբերյալ քննարկումը, որպեսզի սույն դասի անձնական կիրառումն անցկացնելու համար ժամանակ ունենաս:

Այս հարցը բարձրացնելու հիմնական նպատակը մատնանշելն է, որ Աստվածաշունչը լի է մարգարեություններով, թե ինչպես է Աստված ծրագրում օգտագործել Իր ուժը Հիսուս Քրիստոսի գալուց առաջ և հետո: Այս մարգարեությունները և՛ Հին Կտակարանում են, և՛ Նոր Կտակարանում: Եթե դու բավականաչափ ժամանակ ունենաս, կարող ես մի քանի հատվածներ կարդալ՝ սրա վերաբերյալ օրինակներ բերելու համար:

Հիշեցրո՛ւ ուսանողներին, որ Աստված է դրել այդ մարգարեություններն Աստվածաշնչում, որպեսզի հույս տա ապագայի համար: Մենք չպետք է մեր ողջ ժամանակն օգտագործենք՝ կանխատեսելու համար ներկայիս դեպքերի կարևորությունը՝ կապված Աստվածաշնչի մարգարեությունների հետ: Կատարվելով՝ այս մարգարեությունները ցույց կտան Աստծո գերբնական ուժը: Դա այն հիմնական կետն է, որը մենք ուզում ենք փոխանցել դասի այս հատվածում:

15. Անձնական կիրառման մտքեր (5-10 րոպե):

Ա. **Մի՛ վախեցիր վստահել Աստծուն:** Նա հզոր է, սիրող և վստահելի: Ամենակարևոր անձնական կիրառությունը, որ նրանք այսօր կարող են անել իրենց կյանքում, փրկության համար Աստծուն վստահելն է, եթե դեռ չեն արել: Երկրորդ. նրանք պետք է վստահեն Աստծուն իրենց կյանքում հանդիպող դժվարին իրավիճակների ժամանակ: Թող նրանք գրեն իրենց կյանքի մեկ կամ երկու ասպարեզ մասին, որտեղ կարիք ունեն ավելի շատ վստահել Աստծուն: Հետո թող գրեն մեկ կամ երկու ձևեր, որոնցով նրանք կարող են ցույց տալ Աստծուն, որ վստահում են Նրան իրենց կյանքի այդ ասպարեզում:

Բ. **Դիտարկի՛ր գործող բնության ուժերին օրվա գործունեության ընթացքում այս շաբաթ:** Հիշեցրո՛ւ ինքդ քեզ, որ Աստված այդ ուժերը գործի դրեց, երբ ստեղծեց տիեզերքը: Խորհի՛ր Աստծո վեհության մասին, այն է՝ աշխարհն այնպես է ստեղծել, որ այդ օրենքներն ամեն օր շարունակում են հաստատուն մնալ:

Գ. **Հորդորի՛ր նրանց, որպեսզի աշխատեն Աստծուն ավելի լավ ճանաչել:** Ճանաչի՛ր Նրան, թե ով է Նա, ոչ թե՝ ինչ հրաշքներ է Նա արել:

Դ. **Կախված մի՛ եղիր հրաշքներից, որպեսզի դրանք քեզ Աստծուն ծառայելուն մղեն:** Որոշի՛ր հետևել Նրան, որովհետև Նա Աստված է: Թող սերը լինի քո դրդապատճառը, ոչ թե հրաշքները:

Ե՛վ Հին Կտակարանի ժամանակաշրջանում, և՛ Հիսուսի օրերին հազարավոր մարդիկ բազում հրաշքներ տեսան: Նայի՛ր այն հրաշքներին, որոնք Աստված արեց՝ հրեաներին Եգիպտոսից դուրս հանելու և նրանց որպես ազգ ձևավորելու համար: Բայց և այնպես, միայն մի քանիսն իրոք հավատացին Աստծուն, մինչդեռ մյուսները մեջքով շրջվեցին դեպի Նա:

16. Հանձնարարություններ:

Ա. Դասի վերջում գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1-ինի համար՝ «Աստծո գերբնական ուժը»: Հաշվի առնելով այս դասընթացի որոշ նախագծերի հարցերին տրված պատասխանների անձնական բնույթը՝ դու կարող ես պարզապես անցնելով նրանց սեղանների մոտով և հայացք գցելով ստուգել նրանց աշխատանքը՝ համոզվելու համար, որ նրանք կատարել են այն: Բնավ պետք չէ խնդրել, որ բարձրաձայն կարդան իրենց պատասխանները: Այնուհետև քաջալերի՛ր քո ուսանողներին, որ նրանք, ովքեր հարցեր ունեն, կամ ցանկանում են քո կարծիքն իմանալ, քեզ փոխանցեն իրենց նախագիծը, կամ էլ դասից հետո մոտենան քեզ:

Բ. Խնդրի՛ր, որ բերեն Ուսուցման ուղեցույցի 2-րդ և 4-րդ նախագծերը հաջորդ դասաժամին, որովհետև մենք դրանք օգտագործելու ենք մեր դասի քննարկման ժամանակ:

Գ. Թող քո ուսանողները կարդան Ուսանողի ձեռնարկի 2-րդ գլուխը՝ հաջորդ դասաժամին նախապատրաստվելու համար:

17. Դասի գնահատում:

Խնդրում եմ, գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:
Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

Դաս 2.
Ի՞նչ է հոգևոր զորությունը:

2

1. **Աստվածաշնչյան բանալի համար:**

Ես կարիք ունեմ բացահայտելու ճշմարիտ հոգևոր զորության հատկանիշները:

2. **Բանալի համար:**

Փիլիպպեցիներին 4.13.

«Ես կարող եմ ամեն ինչ անել Քրիստոսի միջոցով, որ զորացնում է ինձ»:

Բ Պետրոս 1.3-4.

«3. Իր աստվածային զորության համաձայն՝ Նրան գիտենալու միջոցով մեզ պարգևեց այն ամենը, ինչ անհրաժեշտ է կյանքին ու աստվածապաշտությանը, որը մեզ կանչել է փառքի ու առաքինության.
4. որոնցով մեզ են տրված ամենամեծ ու թանկագին խոստումները, որպեսզի սրանցով հաղորդակից դառնանք աստվածային բնույթին՝ փախչելով աշխարհիկ ցանկությունից առաջացած ապականություններից»:

3. **Հղում ուսանողական նյութերին:**

Ուսանողի ձեռնարկի 2-րդ գլուխը համընթաց է այս դասի հետ: Ուսանողի ձեռնարկի 2-րդ և 4-րդ նախագծերը նույնպես կարող են օգտագործվել այս դասին:

Այս դասի համար անհրաժեշտ նյութեր:

1. Մեծ ստվարաթուղթ, ֆլոմաստերներ:
2. Պրոյեկտորի սլայդներ, եթե օգտագործելու եք լուսային պրոյեկտոր: Կամ էլ կարող եք օգտագործել համակարգիչ՝ գրելու և թվային պրոյեկտորի միջոցով դասասենյակում՝ էկրանի վրա ցուցադրելու համար:

4. Դասի ջերմացման գործողություն. «Բնության օրենքները» (2-5 րոպե):

Դու կարող ես այսօրվա դասը սկսել խնդրելով նրանց՝ կիսվել քեզ հետ իրենց կյանքից, թե երբ են նրանք նկատել բնության օրենքների գործունեությունը: Մատնանշի՛ր, որ այդ դեպքերը կարող են մեզ համար հիշեցում լինել՝ այսօր աշխարհում Աստծո ներկա ազդեցության մասին: Բացատրի՛ր, որ այսօր մենք քննարկելու ենք Աստծո ստեղծագործության մեկ այլ կողմ. Աստծո հոգևոր զորությունը, որը Նա հասանելի է դարձնում բոլոր նրանց համար, ովքեր որոշում են հետևել Իրեն:

5. Անցկացրո՛ւ Ա. կետը. «Հոգևորապես թույլ լինելու իրականությունը» (3-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 12-13-րդ, Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4-րդ:

Քննարկե՛ք թեմա, որ մենք բոլորս Աստծո հոգևոր զորության կարիքն ունենք, որպեսզի հոգևոր հաստատուն կյանք ապրենք: Օգտագործելով Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4-րդի՝ **«Աստծո հոգևոր զորության կարիքն իմ կյանքում»** հարցը՝ քննարկե՛ք Պողոսի տկարությունը, որը քննարկվում է Բ Կորնթացիներին 12.9-10-ում:

Թող ուսանողները կիսվեն իրենց պատասխաններով, որոնք տվել են 1-ին հարցին.

1. **Կարդա՛ Բ Կորնթացիներին 12.1-10-ը: Համառոտ նկարագրի՛ր այն հիմնական մասը, որ Պողոսն այստեղ ներկայացնում է իր տկարության մասին:**

Դու կարող ես համառոտ ներկայացնել, թե ով է Պողոսը, նրանց համար, ովքեր քիչ գիտեն, կամ ոչինչ չգիտեն Աստվածաշնչից:

Այս պահին դու կարող ես համառոտ քննարկել նրանց պատասխանները, որոնք տվել են Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4-րդի 2-րդ հարցին:

2. **Մտածի՛ր քո կյանքի մասին: Քո կյանքի ո՞ր ասպարեզներում ես դու թույլ և կարիք ունես Աստծո զորության, որպեսզի օգնի քեզ: Ընտրի՛ր քո կյանքի թույլ կողմերից մեկն ու գրի՛ր, թե որն է դա, և ինչպես կցանկանայիր, որ Աստված օգներ քեզ:**

Սա կարող է նրանց օգնել հասկանալու, որ մենք բոլորս ունենք տկար ասպարեզներ, որտեղ Աստծո հոգևոր զորության կարիքն ունենք, որպեսզի այնքան ուժեղ լինենք մեր կյանքում, որ դիմադրենք սատանայի բերած փորձություններին: Բայց և այնպես, այս պահին մենք չպետք է մտնենք որևէ մանրամասն քննարկման մեջ: Դու կարող ես հետ հղում անել այս հարցին, երբ դասաժամի վերջում քննարկելիս լինեք սույն դասի անձնական կիրառումը:

2

Հիմնական միտքը, որ մենք ուզում ենք որպես հիմք դնել այս դասաժամի համար, այն է, որ Աստված ուզում է մեզ հասանելի դարձնել Իր հոգևոր զորությունը, որպեսզի կարողանանք հաղթահարել մեր կյանքի թուլություններն ու խնդիրները: Պողոսի օրինակը Բ Կորնթացիներին 10-րդ գլխում հզոր միտք է արտահայտում: Պողոսը հրաշք էր ուզում, որպեսզի իր խնդիրը վերանար: Դրա փոխարեն Աստված խոստացավ նրան ուժ տալ, որպեսզի կարողանար ապրել՝ այդ խնդիրն ունենալով:

Հիմնական տեղը, որում Աստված ուզում է օգտագործել Իր հոգևոր զորությունը, մեր կյանքում եղած մեր տկար ասպարեզներն են: Ողջ դասընթացն անցնելիս մենք այս թեմային պետք է հաճախակի անդրադառնանք:

Աստծո ուժը մեզ հասանելի է, որպեսզի մեզ անցկացնի դժվարին ժամանակների միջով՝ ոչ թե միշտ հեռացնելով այդ դժվարին ժամանակները:

6. Անցկացրո՛ւ Բ. կետը. «Ի՞նչ է ճշմարիտ հոգևոր զորությունը» (2-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 13-14-րդ:

Դասի այս հատվածում մենք ուզում ենք խորը հիմք դնել, թե ուր ենք ուզում գնալ այսօրվա դասի ընթացքում: Այսօրվա ամբողջ դասը՝ Ուսանողի ձեռնարկի 2-րդ գլուխը, աշխատում է պատասխանել հարցին՝ «Ի՞նչ է ճշմարիտ հոգևոր զորությունը»:

Դու կարող ես օգտագործել Ուսանողի ձեռնարկում ներկայացված էլեկտրականության օրինակը՝ մատնանշելու համար, որ մենք կարող ենք մեր կյանքում ինչ-որ բան օգտագործել՝ առանց ամբողջությամբ հասկանալու, թե ինչպես է այն գործում: Նույնը կարող է ճիշտ լինել նաև Աստծո հոգևոր զորության վերաբերյալ: Այս դասընթացի հիմնական նպատակն ուսանողներին օգնելն է, որպեսզի օգտագործեն Աստծո հոգևոր զորությունն իրենց կյանքում, ոչ թե պարզապես սահմանումներ սովորեն:

7. Անցկացրո՛ւ Գ. կետը. «Ի՞նչ է նշանակում հոգևորապես ուժեղ լինել» (8-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 14-18-րդ:

Օգտագործելով գրատախտակը, լուսային պրոյեկտորը, կամ թվային տեսապրոյեկտորը՝ ուսանողներին հարցրո՛ւ՝ «Ի՞նչ է նշանակում հոգևորապես ուժեղ լինել»: Հետո անցի՛ր յոթ կետերով, որոնք նշված են Ուսանողի ձեռնարկում: Դու կարող ես յուրաքանչյուր կետի համար բացատրել, թե մենք ինչու Աստծո ուժի կարիքն ունենք մեր կյանքում՝ տվյալ կետին հասնելու համար:

Քանի որ դասընթացի մնացած հատվածում մենք նորից ենք հղում անելու այս յոթ կետերին, կարող ես խնդրել ուսանողներից մեկին (կամ ինքդ)՝ կազմել պլակատ, որի վրա գրված կլինեն հոգևորապես ուժեղ մարդուն բնութագրող յոթ կետերը: Սա հատկապես օգտակար կլինի հաջորդ երկու դասի ընթացքում բարձրացվող հարցերը քննարկելիս:

Ի՞նչ է նշանակում հոգևորապես ուժեղ լինել:

1. Դու լուրջ որոշում ես կայացրել՝ ապրել Հիսուսի համար:
2. Դու քո որոշումները կայացնում ես՝ սկզբում նայելով, թե ինչ է Աստվածաշունչը քեզ ասում, որ անես:
3. Աղոթքը քո կյանքի մի կարևոր մասն է:
4. Դու սովորում ես Աստծուն լսել քո հոգու միջոցով:
5. Դու Աստծուն սիրում ես ավելի, քան մարդկանց, կամ ուրիշ բաներ:
6. Դու սովորում ես հաղթահարել մեղքի գայթակղությունները:
7. Քո կյանքը ցույց է տալիս «Սուրբ Հոգու պտուղը»:

Հոգևոր զորությունը և գերբնականը, Ուսանողի ձեռնարկ, էջ 14-18-րդ:

8. Անցկացրո՛ւ Դ. կետը. «Մի՛ փորձիր կրկնօրինակել Աստծո զորությունը» (3-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 18-19-րդ:

Զգուշացրո՛ւ նրանց Աստծո զորությունը կրկնօրինակելու վտանգի մասին՝ այն իրականում ունենալու փոխարեն: Աստված կեղծիքը շատ ավելի լավ է տարբերում, քան ցանկացած մարդ: Մարդիկ գուցե կարողանան խաբել իրենց շուրջը գտնվող հավատացյալներին, սակայն իրականում նրանք միայն իրենք իրենց են վնասում:

Գործքի 19-րդ գլխում Սկևա քահանայի որդիների պատմությունը միանգամայն հստակ ցույց է տալիս մեկ այլ վտանգ, երբ մարդիկ փորձում են կրկնօրինակել Աստծո զորությունը: Սատանան չի խաբվում մեր փորձերով՝ մեր հոգևոր ուժի վերաբերյալ մարդկանց մոլորեցնելու հարցում: Նա, ով փորձում է կրկնօրինակել Աստծո զորությունը, չպետք է զարմանա, եթե փորձությունները «հեղեղեն» իր կյանքը: Այդ փորձություններին դեմ կանգնելու միակ ճշմարիտ ձևն Աստծո գործուն հոգևոր զորությունը սեփական կյանքում ունենալն է:

2

9. Ներկայացրո՛ւ Ե. կետը. «Հոգևորապես ուժեղ կյանք ունենալու չորս բանալիները» (2-3 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 19.:

Աստվածաշնչի մեջ հաճախ օգտագործվող այս չորս բառերը կարող են մեզ օգնել հասկանալ, թե ինչ է Աստծո հոգևոր զորությունը: Այս չորս բառերը՝ հավատալիք, վստահություն, հույս և հավատ, հավատացյալների կողմից հաճախ սխալ են հասկացվում և շփոթության առիթ են դառնում: Շատ դժվար կլինի կատարյալ սահմանում տալ յուրաքանչյուր բառի հոգևոր բոլոր կողմերին:

Մատնանշի՛ր, որ այս բառերից յուրաքանչյուրի ողջ խորությունը և մեր ամենօրյա կյանքի վրա դրանց ազդեցությունը հասկանալու համար Քրիստոսի ծառայության մեջ անցկացրած մեր ողջ կյանքը չի բավականացնի: Սակայն այսօր մեր նպատակն այն չէ, որ ուսանողների համար գիտական բարձր մակարդակի վրա թվարկենք այս բառերից յուրաքանչյուրի սահմանումը: Կան որոշ հիմնական հոգևոր պարզ ճշմարտություններ, որոնք նորադարձ հավատացյալները հեշտությամբ կարող են ընկալել: Դրանք կօգնեն նրանց՝ ավելի լավ հասկանալ, թե ինչպես է Աստծո հոգևոր զորությունը գործում նրանց կյանքում:

Ուսանողի ձեռնարկի 19-րդ էջում գտնվող Ե. բաժինը մատնանշում է, որ այսօր մենք ուզում ենք գտնել այն հատկանիշները, որոնք ցույց կտան նշված չափանիշների առանձնահատկությունները:

10. Ուսանողների սահմանումներն այս չորս՝ հավատալիք, վստահություն, հույս և հավատ, բառերի համար (5 րոպե), Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-րդ:

Այս պահին թող ուսանողները կիսվեն իրենց մտքերով այն աշխատանքի շուրջ, որը նրանք կատարել են Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-րդի վրա. **«Հավատ, հավատալիք, վստահություն և հույս»**: Դու կարող ես նրանց սահմանումները ներկայացնել գրատախտակի վրա կամ պրոյեկտորի միջոցով: Գրի՛ր այն բոլոր սահմանումները, որոնք նրանք քեզ կհայտնեն յուրաքանչյուր բառի համար: Այս նախագծի հիմնական նպատակը ցույց տալն է, որ այդ բառերից յուրաքանչյուրն այսօր ունի բազմաթիվ սահմանումներ, որոնցից շատերը կհամընկնեն մյուս երեք բառերի հետ:

Նրանց հնարավորությո՛ւն տուր բացատրելու, թե ինչով են այս բառերն իրարից տարբերվում: Նրանք կարող են կիսվել իրենց պատասխաններով, որ տվել են Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-րդի 2-րդ հարցին: Համառոտ անցկացրո՛ւ այս քննարկումը: Մեր նպատակն այն չէ, որ նրանք կատարյալ պատասխաններ տան:

Այս երկու հարցերին տված նրանց պատասխանները քեզ կօգնեն հասկանալ, թե որտեղ են քո ուսանողները հոգևոր զորության այս չորս բանալիները հասկանալու ճանապարհին: Բայց և այնպես, ճիշտ սահմանումներն ինքնաբերաբար չեն ենթադրում հոգևոր զորության աղյունավետ կիրառում նրանց կյանքում:

11. Դասարանական սահմանումներ այս չորս՝ հավատալիք, վստահություն, հույս և հավատ, բառերի համար
(5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 19-24-րդ էջ:

Հաջորդը. ներկայացրո՛ւ յուրաքանչյուր բառի սահմանումը, որը մենք կօգտագործենք այս դասին: Մենք բոլորս էլ գիտենք, որ այս բառերից յուրաքանչյուրը մեկից ավելի սահմանումներ ունի: Ընտրել ենք մի սահմանում, որը ցույց է տալիս տվյալ բառի ամենահիմնական առանձնահատկությունը և հատկապես այն, թե ինչպես է դա օգտագործվում Աստվածաշնչում:

Այսօր աշխարհի տարբեր եկեղեցիներում կա կարծիքների մեծ բազմազանություն այս չորս բառերի աստվածաբանական սահմանումների վերաբերյալ, հատկապես՝ հավատի և հավատալիքի: Մեր նպատակն այսօր այստեղ աստվածաբանական վիճաբանություն բարձրացնելը չէ: Ընդհակառակը, որքան հնարավոր է՝ մենք կցանկանայինք խուսափել նմանատիպ վիճաբանություններից:

Ահա այն սահմանումները, որոնք Ուսանողի ձեռնարկում տրված են յուրաքանչյուր բառի համար: Տե՛ս 19-24-րդ էջերը՝ լրացուցիչ տեղեկության համար:

Հավատալիք. **Հավատալիքը փաստերի հետ համաձայնելն է:**

Վստահություն. **Վստահությունն ավելին է, քան ընդամենը հավատալը. դա վստահություն է մեկ այլ անձնավորության հանդեպ:**

Հույս. **Եթե վստահությունը կառուցվում է անցյալի վրա, ապա հույսը նայում է ապագային:**

Հավատ. **Եթե դու հավատ բառը նայես մեծ բառարանում, տարբեր սահմանումներ կգտնես այնտեղ:**

Պլակա՛տ կազմիր այս չորս բառերով և փակցրո՛ւ քո դասասենյակի պատին: Երբ ուսանողները դասարանում քննարկման ժամանակ անդրադառնան այս բառերին, օգտագործի՛ր նշված պլակատը, որպեսզի նրանք կիրառեն այդ սահմանումները:

2

12. Օրինակներ վերը նշված չորս բառերի համար (5-10 րոպե):

Այս չորս բառերի համար առօրյա կյանքից օրինակնե՛ր բեր՝ օգտագործելով նշված սահմանումները: Քո բերած օրինակներով ցո՛ւյց տուր այս բառերի միջև եղած տարբերությունները:

Օրինակ, դու կարիք չունես «հուսալու», որ առավոտյան կնախաճաշես, եթե արդեն նախաճաշել ես:

Դու «հավատում ես», որ նախաճաշել ես, այսինքն՝ համաձայնում ես փաստերի հետ:

Դու կարող ես «հուսալ», որ երեկոյան կընթրես՝ «հուսալով», որ դա ժամանակին պատրաստ կլինի, և ստիպված չես լինի երկար սպասել:

Դու «վստահում ես» խոհարարին, այսինքն՝ քո վստահությունն ուղղված է այդ մարդուն, որ նա քեզ համար կպատրաստի անվնաս կերակուր, որը քեզ չի սպանի, եթե այն ուտես:

13. Հավատի իմաստը:

Այս դասի քննարկման համար մենք «հավատ» բառի սահմանումը սահմանափակել ենք այնքանով, որքանով այն վերաբերում է հոգևոր զորությանը: Մենք կօգտագործենք մյուս երեք բառերը՝ նկարագրելու համար այն իրավիճակները, որտեղ մենք Աստծո հավատն ունենալու կարիքը չունենք՝ տվյալ գործը կատարելու համար: Ուսանողի ձեռնարկի 22-24-րդ էջերում կան Աստվածաշնչում հավատի գործունեության մի քանի օրինակներ:

Հավատի վերաբերյալ հստակ պատկերացում ունենալը, ինչպես մենք ենք այն այստեղ սահմանում, շատ կարևոր է ողջ դասընթացի համար: Դասընթացի մնացած հատվածն անցնելիս հաճախ վերադարձի՛ր այս սահմանմանը՝ համոզվելու համար, որ նրանք հասկանում են, որ հավատը ոչ թե մեր, այլ Աստծո զորությունն է, որը գործում է մեր միջոցով:

14. Անցկացրո՛ւ Զ. կետը. «Հոգևոր զորություն ունենալու այս չորս բանալիների միջև եղած կապը» (5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 24-26-րդ:

Օգտագործի՛ր Ուսանողի ձեռնարկի 25-րդ էջի նկարազարդումները, որպեսզի հստակեցնես հոգևոր զորություն ունենալու չորս բանալիների միջև եղած կապը:



Չորս շրջանակները ներկայացնում են այս չորս բանալիները: Սկզբում օգտագործի՛ր համընկնող պատկերազարդումը՝ մատնանշելու համար, որ հավատը, հավատալիքը, հույսն ու վստահությունը համընկնում են մեկը մյուսին և համատեղ գործում են մեր կյանքում:

Բայց և այնպես, որպեսզի այս չորս կետերի վերաբերյալ քննարկումը մեր դասարանի համար հեշտացնենք, մենք ուզում ենք օգտագործել երկրորդ պատկերազարդումը և դրանց վերաբերվել այնպես, կարծես դրանք միանգամայն առանձին են:



Այս դասընթացի մնացած հատվածի համար քաջալերի՛ր քո ուսանողներին, որ փոփոխակի օգտագործեն այս եզրույթները, սակայն օգտագործեն այն հստակ սահմանումները, որոնք մենք առաջարկեցինք յուրաքանչյուր եզրույթի համար:

Ուսանողի ձեռնարկի 26 էջերում կա նկարագրություն, թե ինչպիսին է մեր կյանքը այս չորս բանալիներից յուրաքանչյուրի բացակայության դեպքում: Այնուհետև այն նկարագրում է, թե ինչ է տեղի ունենում մեր կյանքում, երբ դրանցից յուրաքանչյուրը ներկա է:

2

15. Անցկացրո՛ւ Է. կետը. «Որտե՞ղ կարող ենք օգտագործել հոգևոր զորությունը մեր կյանքում» (5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 26-28-րդ:

Ուսանողի ձեռնարկի 26-27-րդ էջում դու կարող ես գտնել մի ցուցակ, որը նկարագրում է այն ասպարեզների որոշ մասը, որտեղ հավատացյալը կարող է օգտագործել իր հավատը: Այս մասին մենք ավելի մանրամասն կխոսենք հաջորդ երկու դասաժամերին, բայց ժամանա՛կ հատկացրու՝ դա այստեղ ներկայացնելու համար, որպեսզի նրանք կարողանան տեսնել այն գործնական կապերը, որոնք դրանց միջև գոյություն ունեն մեր ամենօրյա կյանքում Աստծո հոգևոր զորությունն օգտագործելիս:

Հոգևոր զորություն զարգացնելը ընթացք է, սակայն Աստված այսօր պատրաստ է օգնել ցանկացած մարդու: Նրանք կարիք չունեն սպասելու, որպեսզի հոգևորապես հասուն դառնան՝ նախքան Աստված նրանց հոգևոր զորություն կտա:

Դու կարող ես այս ցուցակով պլակատ կազմել և փակցնել դասասենյակի պատին՝ դասընթացի մնացած հատվածի համար:

Որտե՞ղ կարող ենք օգտագործել հոգևոր զորությունը մեր կյանքում:

1. Դառնալ ճշմարիտ քրիստոնյա (փրկություն): Եփեսացիներին 2.8-9
2. Շարունակել լինել ճշմարիտ քրիստոնյա: Բ Պետրոս 1.3
3. Անել Աստծո կամքը: Սաղմոս 32.8
4. Մեղքը հաղթահարելու ուժ ունենալ: Ա Հովհաննես 5.4-6
5. Անցնել դժվարություններով ու փորձություններով: Հակոբոս 1.2-5
6. Բժշկություն: Հակոբոս 5.15
7. Հաղթահարել փորձությունները: Ա Կորնթացիներին 10.13
8. Հնազանդվել Աստծո օրենքներին: Սաղմոս 119.11
9. Ներկա կարիքների համար: Դու կարող ես հավատ կուտակել նաև ապագա կարիքների համար: Փիլիպպեցիներին 4.6-7

Հոգևոր զորությունը և գերբնականը, Ուսանողի ձեռնարկ, էջ 26-27-րդ:

16. Քննարկի՛ր այն պատմությունը, թե ինչպես Կալիֆոռնիայի մի ընտանիք փորձեց «հավատով բժշկություն» անել (5-10 րոպե):

Հաջորդ էջի շրջանակում գտի՛ր Կալիֆոռնիայից մի ընտանիքի պատմություն, որը փորձեց հավատի կիրառմամբ բուժել իրենց որդուն, որ շաքարային դիաբետ ուներ: Այս պատմությունը հնարավորություն է ընձեռում քննարկելու, թե ինչպես էր այս ընտանիքը սխալ հասկացել հավատի, հավատալիքի, վստահության, հույսի, հոգևոր զորության և գերբնականի վերաբերյալ աստվածաշնչյան սկզբունքները:

Խնդրում եմ, ժամանա՛կ հատկացրու՝ այս պատմությունը դասարանում կարդալու համար, քանի որ դա ստուգարքի մի մաս է, որը տրվելու է վերջին դասաժամին:

Դու կարող ես հետ հղում անել այս պատմությանը սույն դասընթացի մնացած ժամանակահատվածում: Ստուգարքի հարցերից մեկը վերաբերում է այս պատմությանը, այնպես որ դու կարող ես դրա մասին մտածել դասին նախապատրաստվելիս: Այս պատմությունը կարող է նաև օգտագործվել, երբ դու քննարկելու լինես ենթադրությունների թեման 4-րդ դասին:

2

Կալիֆոռնիական ընտանիքը փորձում է «հավատով բժշկություն» անել:

Սան Բեռնարդինո, Կալիֆոռնիա

1973թվին՝ օգոստոսի 19-ի կիրակնօրյա մի գիշեր պարոն և տիկին Փարքերներն իրենց որդուն տարան եկեղեցի, որտեղ մի ավետարանիչ աղոթեց նրա համար: Նրանք հավատում էին, որ ավետարանչի կողմից «ձեռք դնելով» աղոթելը բուժել էր իրենց որդուն շաքարային դիաբետից: «Մենք հավատում ենք, որ հավատով բժշկություն կա»,- ասել էր նրա հայրը:

Համոզված լինելով, որ իրենց 11-ամյա որդին բուժված է, ծնողները նրան այլևս ինսուլին չտվեցին: Տղան լիովին համաձայն էր նրանց հետ: Նա ուրախությամբ պարծենում էր իր ընկերների մոտ, որ հինգ տարվա հիվանդությունից բուժվել էր: Չորեքշաբթի օրը երեխայի շնչառությունը սկսում է ծանրանալ, իսկ խոսակցականը՝ դանդաղել: Մինչ նրա ծնողները և մի քանի հավատացյալներ աղոթում էին, երեխան մահացավ:

Սկզբում Փարքեր ընտանիքը թույլ չէր տալիս, որ կառավարությունը դիահերձում կատարի, որովհետև հավատում էին, որ Աստված հարություն է տալու իրենց որդուն:

Հաջորդ կիրակի գրեթե 200 հոգի հավաքվել էր թաղման վայրում աղոթաժողով անցկացնելու: Նախքան աղոթաժողովի սկսվելը պարոն Փարքերն ասաց.
«Թաղում չի լինելու: Ոչ, մենք դրա համար ոչ մի ծրագիր չունենք, որովհետև իմ որդին՝ Վեսլին, այսօր դագաղից դուրս է գալու»:

Երեք ժամ շարունակ աղոթելուց, երգելուց և Աստվածաշունչ կարդալուց հետո ընտանիքի անդամները թույլ տվեցին, որ նրան թաղեն: Պատանու հայրը ավելի ուշ կանխասաց. «Իմ տղան չորս օրից հարություն է առնելու գերեզմանից»՝
ինչպես Ղազարոսն էր հարություն առել:

Սակայն պատանին հարություն չառավ, և ծնողները հետագայում ձերբակալվեցին և մեղադրվեցին մարդասպանության համար: (Այս պատմության մեծ մասը վերցված է՝ «Ամուսինների աղոթքները չկարողացան հարություն տալ իրենց որդուն» հոդվածից: The Star-Ledger, օգոստոսի 27, 1983թ.): Ծնողները գիրք գրեցին, որտեղ նկարագրում էին իրենց կյանքի այս ողբերգական հատվածը:
Նրանք մանրամասն նկարագրում էին իրենց հոգևոր պայքարները, որ ունեցել էին այդ դեպքից առաջ և հետո: «Մենք թույլ տվեցինք, որ մեր որդին մահանա»
(**We Let Our Son Die, by Lawrence Parker (Harvest House).**):

17. Եզրափակիչ մտքեր (3-5 րոպե):

Այս դասը եզրափակելիս շեշտի՛ր այն միտքը, որն արտահայտված է Ուսանողի ձեռնարկի 28-րդ էջում:

«Նորադարձ հավատացյալների համար կա մի վտանգ, այն, որ նրանք այնքան են փորձում կատարյալ ձևակերպում տալ հոգևոր զորությանը, որ բաց են թողնում դրա ողջ նպատակը: Եթե դեռևս հարցեր ունես կապված հավատալիքի, հույսի, վստահության և հոգևոր ճշմարիտ ուժի հետ, մի՛ թույլ տուր, որ դա խորտակի քեզ և հասցնի հուսահատության աստիճանի: Թող գիտնականներն ու աստվածաբաններն անհանգստանան տեսությունների վերաբերյալ մանրամասնությունների հարցում: Քո կյանքի այս կետում ամենակարևորն այն է, որ սկսես հոգևորապես աճել և գործածել Աստծո զորությունը քո կյանքում, որպեսզի պայքարես այն մարտերում, որոնք անպայման քեզ կհանդիպեն»:

Մեջբերումն արված է Ուսանողի ձեռնարկի 28-րդ էջից:

18. Անձնական կիրառում (5-10 րոպե):

Ա. Թող ուսանողները նորից վերցնեն Ուսանողի ձեռնարկ, Նախագիծ 4-րդը և նայեն այն պատասխանները, որոնք նրանք տվել են 2-րդ և 3-րդ հարցերին: Գուցե նրանցից ոմանք դեռևս կարիք ունեն այս ասպարեզի հետ կապված աստվածաշնչյան համարներ գտնել: Դու կարող ես սա քննարկել դասարանում: Հնարավոր է՝ ոմանք դասից հետո անձնական հանդիպման կարիք ունենան: Հետևի՛ր, որ նրանք ավարտեն Նախագիծ 4-րդի 6-րդ կետը, եթե դեռ չեն արել:

Դու կարող ես ուսանողներին բաժանել զույգերի, որպեսզի միմյանց հետ կիսվեն իրենց նպատակներով: Վերջում նրանք թող աղոթեն միմյանց համար:

Բ. Եթե դու վստահ չես, որ քո ուսանողները ներկա կլինեն հաջորդ դասին, ապա կարող ես նրանց ասել, որ լրացնեն Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 5-րդը՝ որպես իրենց անձնական կիրառության գործողություն այս դասի համար:

2

19. Հանձնարարություններ:

Ա. Դասի վերջում տո՛ւր հարցաշար Բ Պետրոս 1.3-ի վերաբերյալ:

Բ. Գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-րդի համար. «Հավատ, հավատալիք, վստահություն և հույս»:

Գ. Գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4-րդի համար. «Աստծո հոգևոր զորության կարիքն իմ կյանքում», եթե իհա՛րկե չես ուզում նրանց ավելի շատ ժամանակ տալ աշխատելու համար:

Դ. Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 5-րդը՝ «Ինչպես եմ ես գնահատում հոգևոր զորությունն իմ կյանքում:», ծրագրված է այնպես, որ ամփոփի դասաժամին ունեցած ձեր քննարկումը: Հորդորի՛ր նրանց՝ խորապես ուշադրություն դարձնել այս նախագծին:

Ե. Թող քո ուսանողները կարդան Ուսանողի ձեռնարկի 3-րդ գլուխը՝ նախքան հաջորդ դասաժամի սկսվելը:

20. Դասի գնահատում:

Խնդրում եմ, գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:
Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

Դաս 3.
Ինչպե՞ս ունենալ հոգևոր զորություն:

1. **Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:**

Որպես քրիստոնյա՝ ես այսօր կարիք ունեմ բացահայտելու կոնկրետ իրավիճակներ իմ առօրյա կյանքում, որտեղ ես կարող եմ օգտագործել այն հոգևոր զորությունը, որն Աստված ուզում է զարգացնել իմ մեջ:

2. **Բանալի համար:**

Հակոբոս 1.2-3.

«Եղբայրնե՛ր, երբ այլևայլ փորձությունների մեջ ընկնեք, այդ բոլորն ուրախություն համարեցե՛ք՝ իմանալով, որ ձեր հավատի փորձությունը համբերություն է առաջ բերում»:

3. **Հղում ուսանողական նյութերին:**

Ուսանողի ձեռնարկի 3-րդ գլուխը համընթաց է այս դասի հետ: Ուսանողի ձեռնարկ, Նախագիծ 4-րդը՝ «Աստծո հոգևոր զորության կարիքն իմ կյանքում», և Նախագիծ 5-րդը՝ «Ինչպես եմ ես գնահատում հոգևոր զորությունն իմ կյանքում:», նույնպես կարող են օգտագործվել այս դասին:

4. **Դասի ջերմացման գործողություն. Հոգևոր կյանքի գնահատումն իմ կյանքում (5 րոպե), Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 5-րդ:**

Դասն սկսի՛ր՝ քննարկելով իրենց պատասխանները Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 5-րդից. «Ինչպես եմ ես գնահատում հոգևոր զորությունն իմ կյանքում:»: Դու կարող ես սա անել որպես մեծ խմբի քննարկում, որտեղ կամավորները կարող են կիսվել իրենց պատասխաններով: Այս քննարկման համար մեկ այլ հնարավորություն է՝ դասարանը զույգերի կամ 2-3 հոգանոց խմբերի բաժանելը:

Եթե նրանց փոքր խմբերի բաժանելու լինես, նախապես հստակ ցուցումնե՛ր տուր, թե ինչ ես ուզում, որ նրանք անեն: Այս նախագծի և այս քննարկման հիմնական նպատակն է օգնել ամեն մեկին՝ իր հոգևոր ուժը գնահատելու համար: Մենք հույս ունենք, որ սա այսօրվա դասը իմաստալից կերպով ներկայացնելու հնարավորություն կստեղծի, որտեղ մենք քննարկելու ենք, թե ինչպես կարելի է ավելի շատ հոգևոր զորություն ձեռք բերել:

3

3

5. Անցկացրո՛ւ Ա. կետը. «Մի՛ աշխատիր հրաշքների մեջ մասնագիտացած հոգևոր գերաստղ լինել» (5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 29-31-րդ:

Բացատրի՛ր տարբերությունը հոգևոր զորության, որն Աստված ուզում է մեր կյանքում զարգացնել ամենօրյա կիրառման համար, և գերբնական ուժի, որն Աստված ժամանակ առ ժամանակ օգտագործում է հրաշքներ կատարելու համար: Չկան ուժի երկու տարբեր տեսակներ: Հարցը այն է, թե ինչպես է Աստված ուզում Իր ուժն օգտագործել մեր կյանքում: Հնարավոր է՝ Աստված մեզ հազվադեպ օգտագործի (գուցե և երբեք չօգտագործի) հրաշքներ անելու համար: Սակայն Աստված ուզում է, որ մենք իմանանք, թե ինչպես մեր կյանքում ամեն օր օգտագործենք Նրա հոգևոր զորությունը, որպեսզի լուծենք մեզ հանդիպող խնդիրները և դրանց արձագանքենք այնպես, ինչպես Աստված է ուզում, որ արձագանքենք:

Ուսանողի ձեռնարկում կան աստվածաշնչյան երկու օրինակներ այս միտքը պարզաբանելու համար:

Դանիելի 3-րդ գլխում ներկայացված երեք երիտասարդները կրակի հնոցում:

Ղուկաս 9.53-56-ում Հիսուսը հանդիմանում է Իր աշակերտներին այն բանի համար, որ ուզում էին կրակ իջեցնել և սամարացիների մի գյուղ այրել:

6. Անցկացրո՛ւ Բ. կետը. «Ժամանակ և աշխատանք է պահանջվում հոգևոր զորություն զարգացնելու համար» (5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 31-32-րդ, և Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4-րդ:

Քո ուսանողները կարիք ունեն հասկանալու, որ հավատացյալի կյանքում հոգևոր զորության աճը կատարվում է ողջ կյանքի ընթացքում: Նրանք նաև պետք է հասկանան, որ մարդը չի կարող հոգևոր զորություն ունենալ՝ պարզապես ասելով. «Ես հոգևորապես ուժեղ եմ»: Միայն խոսքերը չեն կարող մարդուն հոգևորապես ուժեղ դարձնել: Նա պետք է աճի Աստծո օգնությամբ: Դու կարող ես օրինակ բերել, թե ինչպես է դա տեղի ունեցել քո կյանքում:

Թող քո ուսանողները կիսվեն իրենց պատասխաններով, որոնք տվել են Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4-րդում:

4. Հարցրո՛ւ մեկ կամ երկու հոգու, թե ինչպես են նրանք սովորել հոգևոր ուժ զարգացնել իրենց կյանքի տվյալ ասպարեզում: Գրի՛ր մի քանի բաներ, որոնք դու նրանցից սովորեցիր:

Այս հարցումները կարող են մի քանի շատ օգտակար մտքեր հուշել, կամ էլ, հակառակը, ամբողջությամբ սխալ լինել: Շեշտի՛ր Աստվածաշունչը՝ որպես առաջնային ուսուցիչ օգտագործելու կարևորությունը հոգևոր զորություն զարգացնելու հարցում:

Հուսով ենք, որ այն մտքերը, որոնք քո ուսանողները ձեռք բերեցին այդ հարցումներից, կհամապատասխանեն այն հիմնական թեմաներին, որոնք մենք անցնելու ենք հաջորդ կետում:

7. Անցկացրո՛ւ Գ. կետը. «Հոգևոր զորություն զարգացնելու հիմնական քայլերը» (10-15 բոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 32-37-րդ:

Հիմնական միտքը, որը մենք ուզում ենք այս դասին անցկացնել, հոգևոր զորություն զարգացնելու կարևորագույն քայլերն են: Նախքան այդ քայլերը քննարկելը՝ դու կարող ես վերանայել նախորդ դասի աղյուսակը, որտեղ մենք քննարկեցինք հոգևոր ճշմարիտ զորության հատկանիշները:

Ներքևի աղյուսակը 2-րդ գլխից է: Այն ցույց է տալիս, թե ինչ է տեղի ունենում հոգևոր զորություն ունեցող մարդու կյանքում:

Ի՞նչ է նշանակում հոգևորապես ուժեղ լինել:
(Հոգևոր ճշմարիտ ուժի հատկանիշները)

1. Դու լուրջ որոշում ես կայացրել՝ ապրել Հիսուսի համար:
2. Դու քո որոշումները կայացնում ես՝ սկզբում նայելով, թե ինչ է Աստվածաշունչը քեզ ասում, որ անես:
3. Աղոթքը քո կյանքի մի կարևոր մասն է:
4. Դու սովորում ես Աստծուն լսել քո հոգու միջոցով:
5. Դու Աստծուն սիրում ես ավելի, քան մարդկանց, կամ ուրիշ բաներ:
6. Դու սովորում ես հաղթահարել մեղքի գայթակղությունները:
7. Քո կյանքը ցույց է տալիս «Սուրբ Հոգու պտուղը»:

Հոգևոր զորությունը և գերբնականը, Ուսանողի ձեռնարկ, էջ 14-18-րդ:

Հիմա մենք ցանկանում ենք անդրադառնալ այն հիմնական քայլերին, որոնք կարող ենք անել մեր կյանքում հոգևոր զորություն զարգացնելու համար:

Հոգևոր զորություն զարգացնելու հիմնական քայլերից յուրաքանչյուրին անդրադառնալիս, դու կարող ես բացատրել, թե որն է մեր պատասխանատվությունը, և որն է Աստծո պատասխանատվությունն այս աճի հարցում: Յուրաքանչյուր քայլ պետք է անել Աստծո օգնությամբ: Հոգևոր զորությունը չի առաջանում միայն մարդկային ջանքերով:

3

Փորձի՛ր յուրաքանչյուր քայլ բացատրել՝ օրինակ բերելով քո անձնական, կամ ուրիշ հավատացյալների կյանքից:

Հոգևոր զորություն զարգացնելու հիմնական քայլերը:

1. Դառնալ ճշմարիտ քրիստոնյա:
2. Մոտեցի՛ր Աստծուն:
3. Հնազանդություն:
4. Նախապատրաստվի՛ր Աստծո հոգևոր զորությունը ստանալու համար:
5. Աղոթք:
6. Սովորի՛ր քո փորձություններից ու խնդիրներից:
7. Ծոմապահություն:
8. Փառաբանություն և երկրպագություն:

Հոգևոր զորությունը և գերբնականը, Ուսանողի ձեռնարկ, էջ 32-37-րդ:

3

Երբ անցնեք 8-րդ քայլը՝ «Փառաբանություն և երկրպագություն», դու կարող ես օգտագործել 100-րդ սաղմոսը, որը ցույց է տալիս, թե ինչ գործնական դեր կարող են ունենալ փառաբանությունն ու երկրպագությունը մեր կյանքում:

8. Դասը գործնակա՛ն պահիր (3-5 րոպե):

Այս դասի հիմնական նպատակն է՝ օգնել ուսանողներին, որ այս հոգևոր ճշմարտությունը կապեն իրենց կյանքի հետ: Քո ուսանողներին մի՛ հեղեղիր հազարավոր նոր փաստերով: Այս դասն այնպե՛ս ներկայացրու, որ նրանք սկսեն վերոնշյալ ճշմարտությունները իրենց կյանքում կիրառել ներկա պահից:

Ուսանողի ձեռնարկի 35-րդ էջերում զետեղված 6-րդ քայլը՝ «Սովորի՛ր քո փորձություններից ու խնդիրներից», հիանալի հնարավորություն է տալիս այս դասը կենտրոնացնելու այնտեղ, որտեղ նրանք այսօր գտնվում են: Մատնանշի՛ր, որ Աստված հաճախ այս ձևով է գործում մեր կյանքում: Հակոբոս 1.2-4-ն այսպես է ասում.

Հակոբոս 1.2-4.

«Եղբայրնե՛ր, երբ այլևայլ փորձությունների մեջ ընկնեք, այդ բոլորն ուրախություն համարեցե՛ք՝ իմանալով, որ ձեր հավատի փորձությունը համբերություն է առաջ բերում: Սակայն համբերությունը թող կատարյալ արդյունք ունենա, որպեսզի կատարյալ և ամբողջական լինեք և ոչ մի բանի պակասություն չունենաք»:

9. Փորձությունները կարող են օգնել հոգևոր զորություն զարգացնելու հարցում (3-5 րոպե):

Դու կարող ես ժամանակ հատկացնել այս կետում ներկայացնելու համար, թե ինչպես որևէ փորձություն, որ գալիս է մեր կյանք, կարող է հոգևոր զորություն զարգացնելու հնարավորություն դառնալ:

10. Հոգևոր զորության և հրաշքներ կատարելու տարբերությունը (5-10 րոպե):

Եթե ժամանակ ունես, ապա կարող ես քննարկել տարբերությունը, որ գոյություն ունի փորձությունները հաղթահարելիս Աստծո հոգևոր զորությանը վստահելու և հրաշքներ կատարելու համար Աստծո գերբնական ուժին վստահելու միջև: Եթե դու արդեն օգտագործել ես Կալիֆոռնիայի ընտանիքի պատմությունը, կարող ես հետ հղում անել դրան և այդ պատմությունը քննարկել այս լույսի ներքո: Այդ պատմությունը մատնանշում է այս երկու կողմերի միջև եղած տարբերությունը, որի հետևանքով տեղի ունեցավ շաքարով հիվանդ պատանու մահը: Տե՛ս Ուսանողի ձեռնարկի 32-րդ էջը՝ այդ պատմության նկարագրությանն անդրադառնալու համար:

Պատանու ծնողները գիրք գրեցին իրենց կյանքի այդ հատվածի մասին: **Larry Parker-ն** իր՝ **«We Let Our Son Die»** գրքում եզրակացություն է անում, որով շատ կարևոր մտքեր է փոխանցում մեզ՝ կապված Աստծո կամքը կատարելու հարցում իրենց կատարած սխալների հետ:

11. Սուրբ Հոգու մկրտությունը և հոգևոր զորությունը (5-15 րոպե):

Մեկ այլ հարց, որ կարող ես այստեղ բարձրացնել, այն է, թե Սուրբ Հոգու մկրտությունն ինչ դեր կարող է ունենալ հավատացյալի կյանքում, որը ցանկանում է զարգացնել Աստծո զորությունն իր համար: Շատ հավատացյալների համար Աստծո հետ փոխհարաբերության խորացումը կարող է գալ Սուրբ Հոգու հենց այս պարգևի միջոցով: Այն կարող է բերել համարձակություն՝ վկայելու ոչ-հավատացյալներին, և ուժ՝ դեմ կանգնելու համար առօրյա փորձություններին:

Սուրբ Հոգու մկրտությունը ոչ թե ինքնաբերաբար բերում է հավատացյալի կյանքում լրացուցիչ հոգևոր ուժ, այլ տալիս է հնարավորություն և ներուժ, որը գոյություն ունի Սուրբ Հոգու մկրտության մեջ: Սուրբ Հոգին նշանակալի մեծ դեր ունի այն հավատացյալի կյանքում, ով ձգտում է ունենալ Աստծո հոգևոր զորությունը:

12. Անձնական կիրառություն (5-10 րոպե):

Ա. Թող ուսանողները նորից նայեն իրենց անձնական պատասխանները, որ տվել են Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 5-րդում՝ «Ինչպես եմ ես գնահատում հոգևոր զորությունն իմ կյանքում»: Ընտրեն իրենց կյանքի մեկ կամ երկու ասպարեզ, որտեղ նրանք կարիք ունեն աճելու: Գրեն իրենց կյանքի այդ ասպարեզներից մեկ կամ երկու բան, որը նրանց կօգնի աճել, և որը կարող են սկսել անել այսօր:

Բ. Թող նրանք գրեն փորձությունների մեկ կամ երկու մեծ ասպարեզների մասին, որոնց նրանք ներկայումս հանդիպում են: Նրանք կարող են դա գրել թղթի վրա՝ իմանալով, որ պարտավոր չեն հանձնել ուսուցչին: Թող խորհեն իրենց որոշման կարևորության վրա՝ հաղթահարելու համար այդ փորձությունը և արձագանքելու այնպես, ինչպես Աստված է ասում Աստվածաշնչում: Այնուհետև թող գրեն մեկ կամ երկու գործողություն, որ կարող են անել այս շաբաթ, որպեսզի հաջողակ կերպով դեմ կանգնեն այդ փորձությանը:

13. Հանձնարարություններ:

Ա. Դասի վերջում հարցաշա՛ր տուր Հակոբոս 1.2-4-ի համար:

Բ. Դասի վերջում գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 5-րդի համար. «Ինչպես եմ ես գնահատում հոգևոր զորությունն իմ կյանքում»: Այս նախագծի վրա կատարած՝ ուսանողների աշխատանքի անձնական բնույթը հաշվի առնելով՝ դու կարող ես պարզապես հպանցիկ ստուգել՝ ընդամենը համոզվելու համար, որ նրանք կատարել են իրենց աշխատանքն այդ նախագծով: Բայց մի՛ հավաքիր դրանք, ոչ էլ մանրամասն կարդա՛, եթե, իհա՛րկե, ուսանողը չի խնդրել քեզ այդ մասին:

Գ. Թող ուսանողները կարդան Ուսանողի ձեռնարկի 4-րդ գլուխը՝ նախքան հաջորդ դասաժամին ներկայանալը:

14. Դասի գնահատում:

Խնդրում եմ, գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:
Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

Դաս 4.
Ճշմարիտ հոգևոր զորությունը և արհեստածինները:

1. **Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:**

Ես կարիք ունեմ բացահայտելու Աստծո ուժի և սատանայի ուժի միջև եղած տարբերությունը: Ես պետք է ընտրեմ, թե որ ուժին եմ ապավինելու, երբ անցնելու լինեմ ինձ հանդիպած յուրաքանչյուր իրավիճակով:

2. **Բանալի համար:**

Հռոմեացիներին 8.2.

«Որովհետև Քրիստոս Հիսուսի մեջ եղող կյանքի Հոգու օրենքն ինձ ազատեց մեղքի ու մահվան օրենքից»:

3. **Հղում ուսանողական նյութերին:**

Ուսանողի ձեռնարկի 4-րդ գլուխը համընթաց է այս դասի հետ: Ուսանողի ձեռնարկ, Նախագիծ 6-րդը՝ **«Աստծո ուժը և սատանայի ուժը»**, նույնպես կարող է օգտագործվել այս դասին:

4. **Դասի ջերմացման գործողություն. Աստծո զորությունը և սատանայի ուժը (3-5 րոպե):**

Դասը սկսի՛ր՝ քննարկելով Աստծո ուժի և սատանայի ուժի հարցում ուսանողների սեփական գնահատականը: Դու կարող ես հարցեր տալ՝ ինչպիսիք նշված են ստորև, որպեսզի պատկերացում կազմես, թե ինչպես են նրանք ընկալում այս աշխարհում եղած հոգևոր ուժերը:

Հարցեր քննարկման համար.

Ա. Դու հավատո՞ւմ ես, որ սատանան իրականում ուժ ունի:

Բ. Ինչպե՞ս կհամեմատեիր սատանայի ուժը և Աստծո ուժը:

Գ. Աստված այսօր Իր գերբնական ուժն օգտագործո՞ւմ է այնքան հաճախ, որքան աստվածաշնչյան ժամանակներում:

Դ. Մի պահ մտածի՛ր քո կյանքում հանդիպող փորձությունների մասին: Ի՞նչ են այդ փորձությունները քեզ ասում սատանայի ուժի մասին:

4

5. Անցկացրո՛ւ Ա. կետը. «Աստծո ուժը, սատանայի ուժը և մարդկային ուժը» (5-7 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 38-43-րդ:

Վերը նշված հարցերի պատասխաններն ուղղակիորեն կարող են ազդել այն հանգամանքին, թե ինչպես ես դու անցկացնելու այս թեմաները.

1. Աստծո ուժն իրակա՞ն է:
2. Սատանայի դիվային ուժերն իրակա՞ն են:
3. Ի՞նչ կապ ունի իմ մարդկային ուժն Աստծո ուժի և սատանայի ուժի հետ:

Եթե քո ուսանողներն անցյալում առիթ են ունեցել՝ ականատես լինել սատանայի ուժին օկուլտիզմի միջոցով, ապա կարիք չի լինի նրանց համոզել, որ սատանայի ուժն իրական է: Նրանք, հնարավոր է, հավատում են, որ սատանան ավելի ուժեղ է, քան Աստված, որովհետև նրանք տեսել են, թե որքան մեծ է մեղքի ուժը, բայց անձնապես ականատես չեն եղել և չեն զգացել, թե որքան մեծ է Աստծո ուժը:

Եթե քո դասարանում կան կրոնական անցյալով մարդիկ, ապա նրանք, հնարավոր է, ավելի քիչ զգացած լինեն սատանայի ուժը: Դու կարիք ունես շեշտելու այդ ուժի գոյության իրականությունն այսօր:

6. Սատանայի ուժի վերաբերյալ քրիստոնեական տեսակետը (3-5 րոպե):

Ողջ ժամանակը մի՛ անցկացրու սատանայի ուժի քննարկման համար: Վերահսկի՛ր քննարկումը և թույլ մի՛ տուր, որ այն վերածվի մի տեսակ «վկայությունների ծառայության, թե ինչ մեծ բաներ է արել սատանան իմ կյանքում»: Մատնանշի՛ր, որ թե՛ Հին Կտակարանում, թե՛ Նոր Կտակարանում հստակ նշված է սատանայի ուժի մասին: Եփեսացիներին 6.10-13-ը և Ա Պետրոս 5.8-9-ը պարզապես երկու օրինակներ են, որոնք հավատացյալներին զգուշացնում են լուրջ վերաբերվել սատանայի ուժին:

7. Աստծո ուժի և սատանայի ուժի տարբերությունը (3-5 րոպե):

Դու կարող ես անցնել Հռոմեացիներին 7-րդ և 8-րդ գլուխները: Այդ գլուխները բազմաթիվ հիանալի մտքեր են հաղորդում այն երեք ուժերի վերաբերյալ, որոնք մենք այսօր ուսումնասիրում ենք: Եթե դու օգտագործելու լինես այս հատվածները, զգո՛ւյշ եղիր, որ չխորանաս բարդ աստվածաբանական քննարկումների մեջ և դրա արդյունքում չկորցնես քո նորադարձ հավատացյալներին:

4

8. Ինչպե՞ս է Աստծո զորությունը ներկայացված Աստվածաշնչում (5-10 րոպե), Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 6-րդ:

Այս հատվածում դու կարող ես քննարկել մի քանի հարցեր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 6-րդից. «Աստծո ուժը և սատանայի ուժը»: Դրանք հրաշալի հնարավորություն են ընձեռում՝ ցույց տալու համար Աստծո ուժի և սատանայի ուժի միջև եղած տարբերությունը:

9. Անցկացրո՛ւ Ա.-3. կետը. «Քո ներսում եղած ուժը» (5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 42-43-րդ:

Համոզվի՛ր, որ քո ուսանողները հասկանում են, որ երրորդ ուժը, որը գործում է մեր կյանքում, հենց մեր սեփական ուժն է: Օրինա՛կ բեր քո կամ ուրիշների կյանքից՝ ցույց տալու համար դրական մտածողության և բացասական մտածողության ուժը: Դու կարող ես համառոտ քննարկել մի երևույթ, որը կոչվում է «ինքնամարգարեություն»: (Մարդն առավոտյան արթնանում է և ասում. «Ես գիտեմ, այսօր վատ օր եմ ունենալու: Ես զգում եմ, որ այդպես է լինելու»: Ամենայն հավանականությամբ նա, իրոք, վատ օր կունենա: Նա ինքն իր համար դա ստեղծեց): Հռոմեացիներին 7-րդ և 8-րդ գլուխները հստակ ցույց են տալիս այն խնդիրները, որոնք հավատացյալն ունենում է, երբ փորձում է սուրբ կյանք ապրել իր սեփական ուժերով:

Մեր ներսում եղած ուժը մեծ նշանակություն ունի մեր առօրյա կյանքի համար: Մենք կարող ենք որոշել՝ խելամտորեն օգտագործել այդ ուժը, կամ էլ կարող ենք վատնել այն:

Աստված չի օգտագործի Իր ուժը, որպեսզի մեր կյանքում անի այնպիսի քայլեր, որոնք Նա ակնկալում է, որ մե՛նք պետք է անենք: Սակայն Նա պատրաստ է և ցանկանում է օգնել մեզ այնտեղ, որտեղ մենք մեզ թույլ ենք զգում և դիմում ենք Նրա օգնությանը:

10. Անցկացրո՛ւ Ա.-1. կետը. «Դու պետք է ընտրես քո կյանքի տիրոջը» (5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 38-40-րդ:

Կյանքում գոյություն ունեցող երեք տարբեր ուժերը համառոտ քննարկելուց հետո քննարկի՛ր Ուսանողի ձեռնարկի 38-40-րդ էջերում բարձրացված հարցը՝ **«Դու պետք է ընտրես քո կյանքի տիրոջը»:** Մարդը կարող է իր ձևով իր կյանքը վարելու գայթակղություն ունենալ՝ ինքը լինելով իր առաջնորդը: Սակայն այդպես վարվելով՝ նա իրականում սատանային է ընտրում՝ որպես իր կյանքի առաջնորդ:

Շեշտի՛ր տարբերությունը, թե ինչպես է Աստված գործածում Իր իշխանությունն Իր հետևորդների կյանքում՝ ի հակասություն սատանայի արածի: Սատանան իր հետևորդներին դարձնում է մեղքի ստրուկներ: Նա թակարդն է գցում նրանց և շղթայում մեղքի կապանքներով:

4

Աստված Իր հետևորդներին թույլ է տալիս ամեն օր որոշել, որ վստահեն Իր ուժին: Նա չի հարկադրում մարդկանց, որ ծառայեն Իրեն:

Ոմանք այս հարկադրանքի պակասը կարող են մեկնաբանել որպես թուլություն Աստծո կողմից: Նրանք նայում են իրենց շրջապատի թույլ քրիստոնյաներին և եզրակացնում, որ Աստծո ուժը թույլ է: Իրական խնդիրն այն է, որ քրիստոնյաները չեն օգտագործում Աստծո զարմանահրաշ ուժը, որը հասանելի է նրանց համար:

11. Հավասարակշռված տեսակե՞տ ունեցիր Աստծո զորության և սատանայի ուժի վերաբերյալ (5-10 բոպե):

Մատնանշի՛ր, որ մենք պետք է զգույշ լինենք՝ աչքի առաջ ունենալով Աստծո զորության և սատանայի ուժի հակասության մեծ պատկերը: Եթե դու առանձին դեպքեր նայես, ապա կարող ես հեշտությամբ եզրակացնել, որ սատանայի ուժն ավելի մեծ է, քան Աստծո զորությունը:

Եթե մենք նայենք Հոբի գրքի միայն սկզբնական հատվածը, ապա կարող ենք եզրակացնել, որ Աստված կամ չկարողացավ օգնել Հոբին, կամ էլ չցանկացավ: Սակայն ամբողջ գիրքը կարդալուց հետո մենք տեսնում ենք, որ Աստված իրականում շատ ավելի հզոր է, քան սատանան:

Հիսուսը խաչվեց: Նա մահացավ և թաղվեց: «Նա կորավ»,- մտածեցին ոչ հավատացյալ մարդիկ: Սակայն երեք օր անց Քրիստոսը հարություն է առնում և ապացուցում, որ Աստծո ուժն ավելի մեծ է, քան մահվան ուժը:

Հովսեփը, ըստ Հին Կտակարանի, վաճառվում է ստրկության և իր կյանքի լավագույն տարիները բանտում անցկացնում զրպարտվելու պատճառով: Բայց և այնպես, ավելի ուշ Հովսեփն իրեն ստրկության վաճառող իր եղբայրներին ասում է. «Ու թեև դուք մտածեցիք չարիք պատճառել, սակայն Աստված որոշեց դա լավի վերածել»: Աստված մեղքի աղետալի հետևանքները Աստծո թագավորության մեջ դրական և օգտակար գործոնների վերածելու կարողություն ունի:

12. Իսկ ի՞նչ ասենք պատերազմի, սովի, ցավի և տառապանքի մասին (5-7 բոպե):

Քո դասարանում ոմանք կարող են հարցնել, թե ինչո՛ւ է Աստված այսօր սատանային թույլ տալիս այդքան մեծ ուժ ունենալ աշխարհում: Ինչո՞ւ է Աստված թույլ տալիս, որ գոյություն ունենա ցավ, տառապանք, պատերազմ և այնպիսի մարդիկ, ինչպիսին Հիտլերն է, որոնք հազարավոր անմեղ մարդկանց սպանեցին: Եթե Աստված այդքան սիրող ու հզոր է, ինչո՞ւ է աշխարհն այսօր այսպիսի խառնաշփոթի մեջ: Մի հիանալի աղբյուր, որը խոսում է այս հարցերի մասին, **Phillip Yancey-ի՝ «Where Is God When it Hurts» (Zondervan)** գիրքն է: Գործածի՛ր քո խոհեմությունը՝ որոշելու համար, թե որքան ժամանակ ես ուզում ծախսել այս թեմայի համար:

13. Տվյալ միտքն Աստծո՞ւց է, թե՞ սատանայից (5-10 րոպե):

Մի ասպարեզ, որտեղ նորադարձ (նաև՝ հին) հավատացյալները հաճախ շփոթվում են, այն է, թե ինչպե՛ս կարելի է համոզված լինել՝ արդյոք տվյալ միտքն Աստծո՞ւց է, թե՞ սատանայից: Որոշ մտքեր շատ հեշտ է տարբերելը, որովհետև սատանան այդ պահին մեղքի գայթակղություն է բերում: Աստծո Խոսքը մեզ շատ հստակ ասում է, թե ո՛րն է մեղք, սակայն այդ մտքերը քեզ ասում են, որ անկախ ամեն ինչից՝ գնաս ու անես դա: Որոշ մտքեր ավելի դժվար է տարբերել: Այս հարցը որոշակի մանրամասնությամբ քննարկված է Ուսանողի ձեռնարկի 39-40-րդ էջում:

Ուսանողի ձեռնարկի 39-40-րդ էջում կան աստվածաշնչյան ուղեցույցի երկու օրինակներ, որոնք կարող են մեզ օգնել հասկանալ՝ արդյոք տվյալ միտքն Աստծո՞ւց է, թե՞ սատանայից: 3-5 թվերից հետո դատարկ տեղեր կան: Քո ուսանողները կարող են լրացնել՝ դրանցից յուրաքանչյուրի համար այլ պատասխաններ գրելով:

14. Անցկացրո՛ւ Բ.-1. կետը. «Սատանան ունի արհեստական փոխարինող այն բոլոր բարի գործերին, որոնք Աստված ունի քո կյանքի համար» (3-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 43-44-րդ:

Համոզվի՛ր, որ քո ուսանողները հասկանում են, որ սատանան խաբեբա է և միշտ առաջարկում է արհեստական փոխարինողներ՝ ցանկացած բարի գործի կամ գործողության դիմաց, որն Աստված պատրաստել է քո կյանքի համար:

Սովորաբար սատանայի ասած ձևն ավելի արագ ու հեշտ է թվում, քան Աստծո ասած ձևը, բայց, միևնույն է, այն միշտ հասցնում է հիասթափության:

15. Անցկացրո՛ւ Բ.-2. կետը. «Հավա՞տ, թե՞ ենթադրություն» (5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 44-47-րդ:

Աստվածաշունչը սատանային անվանում է ստության հայր:

Սատանայի սիրելի ստերից մեկն աստվածաշնչյան ճշմարտությունից մի հատված մեջբերելն է, իսկ հետո դրան ինչ-որ բան ավելացնելը: Խաբելու այս մոտեցումն աշխատեց Եվայի պարագայում, իսկ դրանից հետո՝ նաև մյուս տղամարդկանց ու կանանց:

«Հավա՞տ, թե՞ ենթադրություն» կետը քննարկելիս հստակ սահմանի՛ր, թե ինչ է ենթադրությունը: Բե՛ր մի քանի օրինակներ դրա համար և ցո՛ւյց տուր ենթադրության և գործող ճշմարիտ հավատի միջև եղած հակասությունը:

4

Ենթադրությունը մի բան է, երբ համարում ենք, որ գիտենք, թե ինչ է Աստված մեզնից ուզում՝ առանց իրականում Նրանից լսած լինելու: Գործողությունները, որոնք հետևում են «ենթադրությանը», իրենցից ներկայացնում են քայլեր, որոնց վերաբերյալ դու ենթադրում ես, թե Աստված է ուզում, որ անես, չնայած այն բանին, որ Աստված քեզ չի ասել, որ այդ գործողություններն անես:

Հոգևոր զորությունը և գերբնականը, Ուսանողի ձեռնարկ, էջ 44-րդ:

Եթե դու լրացուցիչ օր ունես, կարող ես հեշտությամբ մի ամբողջ դասաժամ հատկացնել այս թեմային, որի համար լրացուցիչ տեղեկության հիանալի աղբյուր է **Charles Farah-ի՝ «From the Pinnacle of the Temple» (Logos Publ.)** գիրքը:

4

16. Անցկացրո՛ւ Գ. կետը. «Սխալները հավատի ուսուցումների մեջ այսօր» (5-15 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 47-51-րդ:

Ինքնուրույն կողմնորոշվի՛ր, թե որքան ժամանակ պետք է հատկացնես այս հարցերը քննարկելու համար: Եթե քո ուսանողները նորադարձ հավատացյալներ են, որոնք դեռ չեն անցել այս խնդիրներով, կարող ես այդ հարցերի վրայով թռուցիկ անցնել: Սակայն եթե քո ուսանողներն անցյալում մասնակցել են եկեղեցիներում, որտեղ տեսել են այդ հակասությունները, կարող ես մի ամբողջ դասաժամ հատկացնել դասի այս հատվածին:

Սխալները հավատի ուսուցումների մեջ այսօր:

1. Տարբերություն կա՞ հավատի և հավատալիքի միջև:
2. «Հավատի բառերը» «կախարդական փայտիկ» չեն՝ հրաշքներ անելու համար:
3. Ո՞րն է հավատի գործողությունը:
4. Կասկած և բացասական դավանանք:
5. Դեղամիջոց ընդունելը սխա՞լ է:
6. Աստված կապվա՞ծ է Աստվածաշնչի բառերով:

Ուսանողի ձեռնարկ, էջ 47-51-րդ:

17. Եզրափակելով այս դասընթացը (2-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 51-52-րդ:

Այսօր այս դասընթացն ավարտելով՝ քաջալերի՛ր ուսանողներին, որ իրենց աչքերը հառեն Հիսուսին և Նրա ճշմարտությանը: Առջևում շատ կլինեն մարտահրավերներ և խնդիրներ, բայց Աստծո օգնությամբ նրանք կարող են հաջողությամբ լուծվել: Աստված պատրաստ է և ցանկանում է տալ Իր զորությունը նրանց, ովքեր Իրեն հետևելու պատրաստակամ են:

Հետ հրո՛ւմ արա հոգևոր ուժի չորս բանալիներին՝ **հավատալիք, վստահություն, հույս և հավատ,** և քաջալերի՛ր նրանց, որ շարունակեն իրենց աճն այդ ասպարեզներից յուրաքանչյուրում:

18. Անձնական կիրառում (5-10 րոպե):

Ա. Թող ուսանողները բացատրեն, թե ինչ կասեին ինը տարեկան երեխային, եթե նա հարցներ. «Ի՞նչ տարբերություն կա Աստծո զորության և սատանայի ուժի միջև»: Դու սա կարող ես անել որպես մեծ խմբի քննարկում, կամ էլ դասարանը բաժանել 2-3 հոգանոց փոքր խմբերի և աշխատել նրանց պատասխանների հետ: Եթե դու նրանց փոքր խմբերի բաժանելու լինես, ապա կարող ես խնդրել 2 կամ 3 խմբերի, որ իրենց եզրակացություններով կիսվեն ընդհանուր դասարանի հետ:

Բ. Հորդորի՛ր, որ քո ուսանողներն իրենց ուշադրությունը կենտրոնացնեն Աստծո զորության վրա, և ոչ թե սատանայի ուժի: Ընդգծի՛ր, որ նրանք կարիք ունեն ապավինել Աստծո զորությանը՝ հաղթահարելու համար իրենց հանդիպած ճակատամարտերում: Դու կարող ես նրանց խնդրել, որ գրեն իրենց կյանքի մեկ կամ երկու ասպարեզի մասին, որտեղ նրանք Աստծո զորությանն ապավինելու ավելի շատ կարիք ունեն:
Թող ուսանողները բաժանվեն զույգերի և աղոթեն միմյանց համար:

19. Հանձնարարություններ:

Գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 6-րդի համար՝ «Աստծո ուժը և սատանայի ուժը», և մյուս նախագծերի համար, որոնք նրանք ավարտել են:

20. Դասի գնահատում:

Խնդրում եմ, գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:
Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

4

Դաս 5. Ստուգարք

1. **Ներկայացրո՛ւ հաջորդ դասընթացը, որն անցնելու եք:**

   ա. Յուրաքանչյուր ուսանողի տո՛ւր հաջորդ դասընթացի՝ Ուսանողի ձեռնարկի մեկ օրինակ: Հանձնարարի՛ր նրանց՝ կարդալ առաջին գլուխը՝ նախքան առաջին դասաժամը սկսվելը:

   բ. Բաժանի՛ր նոր դասընթացի Ուսուցման ուղեցույցը: Թող ուսանողները բացեն Ուսուցման ուղեցույցի վերջում գտնվող՝ *Դասարանական Հանձնարարության Ցուցակ* դատարկ օրինակն իրենց նոր դասընթացի համար: Նրանց հայտնի՛ր յուրաքանչյուր հարցաշարի, նախագծի և ստուգարքի համապատասխան ամսաթվերը:

   գ. Հանձնարարի՛ր ուսանողներին կատարել, եթե Ուսուցման ուղեցույցի նախագծերից ինչ-որ մեկը լրացնելու կարիք կա՝ նախքան հաջորդ դասաժամը:

5

2. **Տո՛ւր ստուգարք այս դասընթացի համար:**

   Ստուգարքի 4-րդ էջում նրանք պետք է նամակ գրեն: Նրանց դատարկ թղթե՛ր տուր այդ նամակը գրելու համար:

3. **Եթե դեռ չես արել, վերադարձրո՛ւ բոլոր հարցաշարերն ու նախագծերը, որոնք դու գնահատել ես:**

Ուսանողի ձեռնարկ

Ուսանողի ձեռնարկը ներառված չէ այս փաստաթղթում, սակայն հասանելի է որպես առանձին փաստաթուղթ:

Ստուգի՛ր, թե «Ինչպե՛ս օգտագործել այս Ուսուցչի ձեռնարկը» բաժնի 5-րդ էջը՝ լրացուցիչ տեղեկությունների համար, և թե ինչպես օգտագործել Ուսանողի ձեռնարկը:

Ուսուցման ուղեցույց

Ուսուցման ուղեցույցը ներառված չէ այս փաստաթղթի մեջ, սակայն հասանելի է որպես առանձին փաստաթուղթ:

Ստուգի՛ր, թե «Ինչպե՛ս օգտագործել այս Ուսուցչի ձեռնարկը» բաժնի 5-րդ էջը՝ լրացուցիչ տեղեկությունների համար, և թե ինչպես օգտագործել Ուսուցման ուղեցույցը:

Ստուգարք

Պատասխաններ

Դասընթացի վկայական

Ստուգի՛ր, թե «Ինչպե՛ս օգտագործել այս Ուսուցչի ձեռնարկը» բաժնի 5-6-րդ էջը՝ լրացուցիչ տեղեկությունների համար, և թե ինչպես օգտագործել Ստուգարքն ու Վկայականը:

Անուն_____ **Հոգևոր զորությունը և գերբնականը**

Ամսաթիվ_____ **Ստուգարք, 5-րդ խմբագրում**

Դասարան_____ _____**Գնահատական**

Ճիշտ-սխալ հարցեր (1 միավոր՝ յուրաքանչյուրը)

Ցուցումներ. Դի՛ր ___X___ , եթե պատասխանը ճիշտ է:
Դի՛ր ___O___ , եթե պատասխանը սխալ է:

1._____Բոլորը ենթակա են բնության օրենքներին:

2._____Այս աշխարհում եղած անարդարությունը, սովը և աղքատությունը հստակ ցույց են տալիս, որ կամ Աստված հոգ չի տանում այդ մարդկանց համար, կամ էլ Նա կարողություն չունի նրանց օգնելու:

3._____Աստվածաշնչում արձանագրված՝ Աստծո առաջին գերբնական գործը մարդու արարումն էր:

4._____Հոգևոր զորությունն Աստծուց տրված պարգև է: Դու ոչինչ չես կարող անել քո կյանքում հոգևոր զորություն զարգացնելու համար:

5._____Հայտնության գիրքը հստակ ասում է, որ Աստված չի կործանի այս երկիրը:

6._____Դու կարող ես Աստծո աչքին հոգևորապես ուժեղ լինել՝ նախքան Հիսուս Քրիստոսին ծառայելու որոշում կայացնելը:

7._____Բոլոր ժամանակների մեծագույն գերբնական դեպքը Հիսուս Քրիստոսի մահն է:

8._____Յուրաքանչյուր մարդու փրկություն Աստծո գերբնական գործ է:

9._____Միայն ոչ-հավատացյալները կարող են ենթադրության մեղք գործել:

10._____Ըստ մեր դասարանական քննարկման՝ հավատի և հույսի միջև ոչ մի տարբերություն չկա:

11._____Յուրաքանչյուր ճշմարիտ հավատացյալ իր ներսում ունի Սուրբ Հոգու զորությունը:

12._____Ճշմարիտ քրիստոնյա լինելն ավելի կարևոր է, քան բժշկվելը:

13._____Հոգևորապես ուժեղ մարդուն անհանգստացնում է, թե ինչ է մտածում Աստված իր կայացրած յուրաքանչյուր որոշման մասին:

14._____Աստված Իր զորությունը տալիս է քեզ, որպեսզի անես այն, ինչ ցանկանում ես:

15._____Եթե կարողանում ես հզոր հրաշքներ անել, դա ցույց է տալիս, որ դու Աստծո հետ շատ մոտ ես:

16._____Ենթադրությունը Աստծո կամքն իմանալն ու անելն է:

17._____Աստված երբևէ չի պատասխանի քո աղոթքներին, եթե մտքումդ կասկածներ ունես:

18._____Դու պետք է հավատաս, որ Աստված կա, եթե ուզում ես Աստծուց հավատ ստանալ:

19._____Շատ հեշտ է կողմնորոշվել, թե ով է հոգևորապես ամենաուժեղը: Նրանք, ովքեր ամենահզոր հրաշքներն են անում, նրանք են ամենաշատը հոգևոր ուժ ստացել Աստծուց:

20._____Ճշմարտապես հոգևոր մարդը կյանքում երբեք ոչինչ չի անի՝ առանց նախապես ուղղակի Աստծուց լսելու, թե ինչ պետք է ինքն անի:

21._____Սատանան իրականում ոչ մի ուժ չունի:

22._____Քանի որ մենք գիտենք, թե ով ենք մենք, և թե ով է Աստված, ուրեմն հեշտությամբ կարող ենք հաղթել սատանային մեր սեփական ուժով:

23._____Հոգևոր զորություն զարգացնելու հարցում մարդու ամենակարևոր պատասխանատվությունն Աստծուն հնազանդվելն է:

Բազմակի ընտրությամբ հարցեր (2 միավոր):

Ցուցումներ. Ընտրի՛ր լավագույն պատասխանը և համապատասխան տառը գրի՛ր հարցի դիմացի դատարկ գծիկի վրա:

1. _____ Մենք Աստծուց հավատ ստանում ենք.
   Ա. Աշխատելով դրա համար:
   Բ. Աղոթելով և Աստծուն դիմելով դրա համար:
   Գ. Ինքներս մեզ հավատալով:

2. _____ Դու գիտես, որ Աստծո հավատն ունես.
   Ա. Միայն, երբ դու քեզ լավ ես զգում:
   Բ. Երբ հավատում ես հավատին:
   Գ. Երբ Սուրբ Հոգին քո հոգու մեջ ասում է, որ դու ունես դա:

3. _____ Հավատալիքը.
   Ա. Աստծուց տրված ուժ է:
   Բ. Փաստերի հետ համաձայնելն է:
   Գ. Աստվածաշնչում դրա մասին գրված չէ:

4. _____ Հավատ ունենալու համար դու պետք է.
   Ա. Աշխատես դրա համար:
   Բ. Պատրաստվես դրա համար՝ ավելի մոտենալով Աստծուն:
   Գ. Խորը մտածես, իսկ հետո հավատաս, որ ունես դա:

5. _____ Հավատը գալիս է.
   Ա. Քո մտքից:
   Բ. Աստվածաշնչից:
   Գ. Աստծուց:

Կարճ շարադրանքով հարցեր.

1. Աստված մարդուն ստեղծեց հատուկ ունակությամբ՝ ազատ կամքով: Բացատրի՛ր, թե ինչ է մարդու համար նշանակում ազատ կամք ունենալ (5 միավոր):

_____

_____

_____

_____

2. Թվարկի՛ր հոգևորապես ուժեղ մարդու չորս հատկանիշներ (8 միավոր, 2 միավոր՝ յուր.):

1._____

2._____

3._____

4._____

3. Գրի՛ր սահմանում յուրաքանչյուր հասկացության համար (Ինչպե՞ս են դրանք օգտագործվում Աստվածաշնչում) (8 միավոր, 2 միավոր՝ յուր.):

1. Հավատ. _____

_____

_____

2. Հավատալիք. _____

_____

_____

3. Հույս. _____

_____

_____

4. Վստահություն. _____

4. Ինչպե՞ս կարող է մարդը հոգևոր ուժեր ստանալ (6 միավոր):

_____

_____

_____

_____

_____

5. Ինչի՞ համար կարող ես օգտագործել հոգևոր ուժը: Նշի՛ր առնվազն չորս օրինակներ (4 միավոր, 1 միավոր՝ յուր.):

1._____

2._____

3._____

4._____

5._____

6. Դասարանում մենք խոսեցինք կալիֆոռնիացի ծնողների մասին, ովքեր ասում էին, որ հավատում են, որ իրենց երեխան բժշկված է: Բայց երեխան մահացավ, երբ նրանք դադարեցին նրան դեղ տալ: Նամա՛կ գրիր նրանց և բացատրի՛ր, թե որն էր նրանց խնդիրը, ինչն էին նրանք սխալ արել, և որը կլիներ նրանց համար ճիշտ քայլը, որ անեին:

   Ահա մի քանի ուղեցույցներ այդ նամակը գրելու համար: Ենթադրենք, թե այդ ծնողները քո մասին երբևէ չեն լսել: Ներքևում գրված հարցերը կարող են քեզ օգնել քո մտքերը շարադրելու համար: Մի՛ աշխատիր պարզապես պատասխանել այդ հարցերին:

   Այդ նամակը գրի՛ր առանձին թղթի վրա (24 միավոր, 3 միավոր՝ 8 հարցերից կամ կետերից յուրաքանչյուրի վերաբերյալ գրած մտքերի համար):

   1. Որտեղի՞ց ես դու տեղեկություն ստացել հավատի մասին:
   2. Ի՞նչ է հավատը:
   3. Բացատրի՛ր հավատի և հավատալիքի միջև եղած շփոթությունը:
   4. Ինչպե՞ս կարող էին նրանք հավատ ձեռք բերել հզոր հրաշքներ անելու համար:
   5. Ինչո՞ւ է Աստված հրաշքներ գործում:
   6. Ինչպե՞ս կարող էին նրանք իմանալ, որ հրաշք գործելու հավատ ունեն:
   7. Որտեղի՞ց կարող էին նրանք ավելի շատ տեղեկություն ձեռք բերել հավատի վերաբերյալ:
   8. Ինչպե՞ս կարող էին նրանք իմանալ, որ հավատ ունեն իրենց որդու բժշկության համար:

7. Ներքևում գրի՛ր անգիր համարները (12 միավոր):

Հոգևոր զորությունը և գերբնականը

Ստուգարքի պատասխաններ, 5-րդ խմբագրում

Էջ 1.

Ճիշտ-սխալ հարցեր
(1 միավոր՝ յուրաքանչյուրը):

1. X ճիշտ
2. 0 սխալ
3. 0 սխալ
4. 0 սխալ
5. 0 սխալ
6. 0 սխալ
7. 0 սխալ
8. X ճիշտ
9. 0 սխալ
10. 0 սխալ
11. X ճիշտ
12. X ճիշտ
13. X ճիշտ
14. 0 սխալ
15. 0 սխալ
16. 0 սխալ
17. 0 սխալ
18. X ճիշտ

Էջ 2.

19. 0 սխալ
20. 0 սխալ
21. 0 սխալ
22. 0 սխալ
23. X ճիշտ

Բազմակի ընտրությամբ հարցեր
(2 միավոր՝ յուր.):

1. Բ
2. Գ
3. Բ
4. Բ
5. Գ

Համառոտ շարադրությամբ հարցեր

1. Առաջարկվող պատասխաններ
   (5 միավոր):

   Մարդը ստեղծվեց ընտրություն կատարելու և անձնական որոշումներ կայացնելու ընդունակությամբ: Այս ազատ կամքը նշանակում է, որ մենք ազատ կերպով ընտրում ենք բարին կամ չարը:

Հոգևոր զորությունը և գերբնականը

Ստուգարքի պատասխաններ, 5-րդ խմբագրում

էջ 3.

2. Առաջարկվող պատասխաններ. ընդամենը 4 պատասխան է պետք լրիվ գնահատական ստանալու համար (8 միավոր, 2 միավոր՝ յուր.):

   Ա. Դու Հիսուսի համար ապրելու խորը որոշում ես կայացրել:

   Բ. Դու քո որոշումները կայացնում ես Աստվածաշնչին անդրադառնալուց հետո՝ իմանալու համար, թե ինչ է այն քեզ ասում, որ անես:

   Գ. Աղոթքը քո կյանքում կարևոր մաս է:

   Դ. Դու սովորում ես Աստծուն լսել քո հոգու միջոցով:

   Ե. Դու Աստծուն սիրում ես ավելի, քան մարդկանց կամ իրերը:

   Զ. Դու սովորել ես հաղթահարել մեղքի փորձությունները:

   Է. Քո կյանքը ցույց է տալիս «Սուրբ Հոգու պտուղները»:

3. Առաջարկվող պատասխաններ (8 միավոր, 2 միավոր՝ յուրաքանչյուրը):

   1. <u>Հավատ.</u> Աստծուց տրված ուժ, որը միշտ մղում է գործողության:

   2. <u>Հավատալիք</u>. համաձայնելը փաստերի հետ: Մտքով ընդունելը այն, ինչը ճիշտ է:

   3. <u>Հույս</u>. ակնկալիք, որ ապագայում ինչ-որ բան տեղի կունենա:

   4. <u>Վստահություն</u>. վստահել, կախված լինել ինչ-որ մեկից:

4. Առաջարկվող պատասխաններ (5 միավոր):

   Ա. Դառնալ ճշմարիտ քրիստոնյա:

   Բ. Մոտենալ Աստծուն:

   Գ. Հնազանդություն:

   Դ. Նախապատրաստվի՛ր՝ Աստծուց հոգևոր զորություն ստանալու համար:

   Ե. Աղոթք:

   Զ. Սովորի՛ր քո փորձություններից ու խնդիրներից:

Հոգևոր զորությունը և գերբնականը

Ստուգարքի պատասխաններ, 5-րդ խմբագրում

էջ 3.

5. Առաջարկվող պատասխաններ (4 միավոր, 1 միավոր՝ յուրաքանչյուրը): Ընդամենը 4 պատասխան է պետք լրիվ գնահատական ստանալու համար:

   1. Հաղթահարել մեղքի փորձությունները:

   2. Հնազանդվել Աստծո օրենքներին:

   3. Անել Աստծո կամքը:

   4. Անցնել դժվարություններով ու փորձություններով:

   5. Շարունակել լինել ճշմարիտ քրիստոնյա:

էջ 4.

6. Անձնական պատասխաններ (24 միավոր):

7. Անգիր համարներ (12 միավոր):

   Բ Պետրոս 1.3 Հակոբոս 1.2-4

Շնորհավորում ենք

_____

-ին, առ այն, որ նա ավարտել է

Հոգևոր զորությունը և գերբնականը

դասընթացի ուսու ական պահանջները:
Մենք գնահատում ենք Ձեր մասնակցությունը այս դասընթացին և հուսով ենք, որ Դուք հաջողությամբ կշարունակեք Ձեր կյանքում կիրառել այն աստվածաշնչյան ուսուցումները, որոնք դուք սովորել եք այս դասընթացի ընթացքում:

Ուսուցիչ _____

Ամիս, ամսաթիվ _____

Շնորհավորում ենք

_____

-ին, առ այն, որ նա ավարտել է

Հոգևոր զորությունը և գերբնականը

դասընթացի ուսու ական պահանջները:
Մենք գնահատում ենք Ձեր մասնակցությունը այս դասընթացին և հուսով ենք, որ Դուք հաջողությամբ կշարունակեք Ձեր կյանքում կիրառել այն աստվածաշնչյան ուսուցու երբորոնք դուք սովորել եք այս դասընթացի ընթացքում:

Ուսուցիչ _____

Ամիս, ամսաթիվ _____